



ԷՄԻԼՅԱ ԼԵՎՈՆԻ ՏԻՏԱՆՅԱՆ  
ՊԱՏՎԱԿԱՆ ՍՏԵՓԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ  
ՄԱՐԻԱ ԶՈՂԵՖԻ ԷՍՊՈՆԱ

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՈՉ  
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ  
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀՀ-ՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2024



ՀՏԴ 347.7:339.564:341.67(07)  
ԳՄԴ 67.404.91+65.428.2+67.911.13g7  
S 650

**Հեղինակներ՝** Էմիլյա Լևոնի Տիտանյան /Emilya L. Titanyan Պատվական  
Ստեփանի Ոսկանյան/ Patvakan S. Voskanyan  
Մարիա Ջոզեֆի Էսպոնա/ Maria J. Espona

Տիտանյան Է., Ոսկանյան Պ., Էսպոնա Մ.

S 650 Երկակի նշանակության ապրանքների և ոչ նյութական արժեքների արտահանման վերահսկողության առանձնահատկությունները ՀՀ-ում / Է. Տիտանյան, Պ. Ոսկանյան, Մ. Էսպոնա.- Եր.: Ինովացիոն հետազոտությունների կենտրոն ՀԿ, 2024.- 176 էջ:

Սույն ձեռնարկը ներառում է զանգվածային ոչնչացման գենքի չտարածման հարցեր, միջազգային արտահանման ռեժիմների համառոտ նկարագրություն, արտահանման վերահսկողության ոլորտում ՀՀ օրենսդրության հիմունքներ, նախկին և ներկայիս կարգավորումները, ինչպես նաև խնդրո առարկային վերաբերելի այլ հարցերի վերլուծություն: Ձեռնարկը կոչված է նաև աջակցելու ձեռնարկատիրական, ինչպես նաև գիտական գործունեություն ծավալող ընկերություններին շրջանառության հսկողության ոլորտում երկակի նշանակության ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվությունների տրամադրման և ՀՀ տարածքով երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրման գործընթացի իրականացմանը:

ՀՏԴ 347.7:339.564:341.67(07)  
ԳՄԴ 67.404.91+65.428.2+67.911.13g7

ISBN 978-9939-1-1894-9

© Ինովացիոն հետազոտությունների կենտրոն ՀԿ, 2024

© 2024-Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ), 2024



This manual was produced as part of the European Union funded Targeted Initiative CBRN Export Control on Dual-Use Materials and Intangible Technologies that was implemented through the International Science and Technology Center.

This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of the authors and do not necessarily reflect the views of the European Union.

The information presented in this report originates from a desk study based on open-source data. Despite every care taken, the authors are grateful for any errors or omissions that are brought to its attention. The authors also hereby disclaim any liability or responsibility arising from its use in any way.

© - 2024 - International Science and Technology Center (ISTC).  
All rights reserved. Licensed to the European Union under conditions.

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Երկակի նշանակության ապրանքների և ոչ նյութական տեխնոլոգիաների արտահանման վերահսկման նպատակային նախաձեռնության շրջանակներում, որն իրականացվել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջոցով:

Ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվություն են կրում բացառապես հեղինակները, և այն կարող է չհամընկնել Եվրոպական միության տեսակետի հետ:

Սույն ձեռնարկում ներկայացված տեղեկատվությունը ստացվել է բաց աղբյուրներում առկա տվյալների ուսումնասիրությունից: Այնուամենայնիվ, հեղինակները երախտապարտ են ցանկացած սխալների կամ բացթողումների համար, որոնք կներկայացվեն իրենց ուշադրությանը: Սույնով հեղինակները նաև հրաժարվում են ցանկացած պատասխանատվությունից, որը կապված է սույն ձեռնարկի ցանկացած նպատակով հետագա օգտագործման հետ:

© - 2024-Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ).  
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզիան Եվրոպական միությանը տրվել է որոշակի պայմաններով:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	6
§ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	10
§ 3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ .....	16
§ 4. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ .....	31
§ 5. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ .....	50
§ 6. «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՄԵԽԱՆԻԶՄԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....	69
§ 7. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ .....	72
§ 8. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ .....	94
§ 9. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ .....	100
§ 10. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ..	112



§ 11. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ .....	132
§ 12. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	140
§ 13. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ-ՈՒՄ .....	146
§ 14. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ .....	157
ԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ .....	157
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	168



## § 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սառը պատերազմի ավարտը հանգեցրեց միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորմանը: Չնայած երկու գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև գլոբալ առճակատումն ավարտվել էր, այնուամենայնիվ ռազմաքաղաքական երկբևեռությունը ոչ միայն չէր դադարել, այլև շարունակում էր մնալ ապակայունացված: Այս պայմաններում զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) տարածումը էական վտանգ կարող էր ներկայացնել, ուստի միջազգային հանրության համար անվտանգության ապահովումն ու հնարավոր ռիսկերի կանխումը դարձավ ավելի քանի կարևոր մարտահրավեր:

Անգամ տարիներ անց այս ոլորտը շարունակում է մնալ բարդ և անկանխատեսելի, քանի որ որոշ պետություններ ձգտում են տիրապետելու զանգվածային ոչնչացման զենքերին և դրանց փոխադրման միջոցներին, ինչպես նաև զարգացնելու ազգային ներուժը՝ արդյունաբերական և տեխնոլոգիական առաջընթացի համար: Գլոբալիզացման, արհեստական բանականության և տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում միջազգային հանրությունը բախվում է դիվիզայի՝ մի կողմից գիտական և տեխնոլոգիական արագ առաջընթացի՝ իրազեկվածություն, տեղեկատվության հասանելիություն, իսկ մյուս կողմից՝ ՁՈՁ և դրա բաղադրիչների ստեղծման ուղիների, համապատասխան նյութերի և տեխնոլոգիաների ապօրինի



շրջանառություն: Զանգվածային ոչնչացման զենքի կիրառմամբ ահաբեկչությունը դարձել է հրատապ խնդիր, որը պահանջում է համարժեք հակազդող մեխանիզմների մշակում: Խնդիրը ավելի է բարդանում, այսպես կոչված, «սև» շուկաների առկայությամբ, որտեղ հնարավոր է գտնել ԶՈՁ-ի և դրանց փոխադրման միջոցներին ստեղծման համար անհարժեշտ նյութեր և տեխնոլոգիաներ:

Հարկ է նշել, որ միջուկային, քիմիական, կենսաբանական և այլ վտանգավոր զինատեսակների տարածմանը արդյունավետ հակազդելուն խոչընդոտող մեկ այլ գործոն է համարում կիրառելի ապրանքների և տեխնոլոգիաների լայն շրջանակը, ինչը ստիպում է ցանկացած արտահանման նկատմամբ սահմանել համապարփակ հսկողություն: Դա բեռ է հանդիսանում ինչպես վերահսկող պետության, այնպես էլ տեղական արտահանողի համար: Հետևաբար, անհրաժեշտ են ողջամիտ կարգավորումներ, որոնք կապահովեն տնտեսական անխոչընդոտ աճ և, միևնույն ժամանակ, կհամադրվեն ազգային անվտանգության պահանջների հետ: Այդ պատճառով առաջնահերթ է դառնում տարբեր մակարդակներում համագործակցությունը, որտեղ հիմնական դերակատարներ են դառնում պետությունը, գիտությունը (այդ ոլորտի սուբյեկտները) և ձեռնարկատիրական գործունեությունը (այդ ոլորտի սուբյեկտները):

Այս համատեքստում ծառայած խնդիրները լուծելու նպատակով ստեղծվել են արտահանման միջազգային վերահսկման



այնպիսի ռեժիմներ, ընդունվել են մի շարք բանաձևեր, ինչպես նաև յուրաքննաչյուր պետություն, ելնելով քաղաքական, տնտեսական և մի շարք այլ առանձնահատկություններից, հիմնել է շրջանառության, այդ թվում՝ արտահանման ներպետական վերահսկողության համակարգ և օրենսդրական բազաներ:

Շրջանառությունը, այդ թվում՝ արտահանման հսկողությունը այն եզակի ինստիտուտներից է, որ, հանդիսանալով անվտանգության բաղկացուցիչ մաս, միևնույն ժամանակ անշեղորեն կապված է շուկայական հարաբերությունների հետ, որը հնարավորություն է տալիս շուկայական հարաբերություններ ունենալ տնտեսապես զարգացած պետությունների հետ: Այլ կերպ ասած, արևմտյան ընկերությունների և գիտական կազմակերպությունների համար վստահելի գործընկեր դառնալու համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր կարգավորումները և սահուն տեղայնացնել ներպետական ինստիտուտների վրա: Այսպիսով, կարելի է պնդել, որ «արտահանման վերահսկողության համակարգը» ընդհանուր հայեցակարգ է, որը ներառում է կառավարության և այլ մարմինների արտաքին տնտեսական գործունեության և քաղաքականության իրականացմանն ուղղված քայլերը՝ որոշակի քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակների հասնելու համար: Այս հայեցակարգը ներառում է նաև այդ կառույցների գործունեության գործնական ձևերը և համապատասխան օրենսդրությունը՝ ներառյալ կարգավորող իրավական ակտերը: Հայաստանում





շրջանառության հսկման ազգային համակարգը ներառում է երկու առանձին ռեժիմներ՝ ռազմական նշանակության ապրանքների և երկակի նշանակության ապրանքների համար: Չնայած արտաքին նմանությանը՝ այս ռեժիմներն ունեն մի շարք էական տարբերություններ, այդ թվում՝ իրավական կարգավորման առարկան և որոշումների կայացման մեխանիզմը: Սույն ձեռնարկում ընդգրկված են միայն «երկակի նշանակության» ապրանքների և դրանց արտահանման և տարանցիկ փոխադրման հետ կապված հարցերը:

Սույն ձեռնարկը կոչված է աջակցելու ձեռնարկատիրական, ինչպես նաև գիտական գործունեություն ծավալող ընկերություններին շրջանառության հսկողության ոլորտում երկակի նշանակության ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվությունների տրամադրման և ՀՀ տարածքով երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրման գործընթացի իրականացմանը:



## § 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Արտաքին տնտեսական գործունեություն** - ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, տեղեկատվության, մտավոր գործունեության արդյունքների (մտավոր սեփականություն, այդ թվում՝ վերջինիս նկատմամբ իրավունքները) արտաքին առևտրի միջոցով ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

- **Համապատասխանության ներկազմակերպական ծրագիր**՝ կազմակերպչական, վարչական, տեղեկատվական և այլ բնույթի միջոցառումներ, որոնք կոչված են պահպանելու շրջանառության հսկողության կանոնները, նվազեցնելու հնարավոր ռիսկերը և իրականացվում են արտահանող սուբյեկտների կողմից:

- **Երկակի նշանակության ապրանքներ** կամ հսկվող ապրանքներ՝ յուրաքանչյուր տեսակի գույք, որ կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին ու հատկություններին համապատասխան՝ կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

- **Երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ** (այսուհետ՝ հսկվող ոչ նյութական արժեքներ)՝ ցանկացած բնույթի տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագ-



րեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան՝ կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար: Սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման համար անձը ենթակա է պատասխանատվության միայն այն դեպքում, երբ գիտակցել է կամ պարտավոր էր գիտակցել, որ դրանք, բացի քաղաքացիական նպատակներից, կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար.

- **զանգվածային ոչնչացման զենք՝** միջուկային, քիմիական, ճառագայթային, կենսաբանական կամ այլ զենք, որը օգտագործվում է կամ կարող է օգտագործվել մեծ քանակությամբ մարդկանց կյանքին և առողջությանը վնասելու համար<sup>1</sup>

- **փոխադրման միջոցներ՝** հրթիռներ և հեռակառավարվող թռչող սարքեր, որոնք կարող են օգտագործվել ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման համար.

- **համապարփակ վերահսկողություն՝** հսկողության մեխանիզմ, որը կիրառվում է ցանկերում չներառված հսկվող ապ-

---

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես DOD Dictionary of Military and Associated Terms <https://irp.fas.org/doddir/dod/dictionary.pdf>



րանքների և հսկվող ոչ նյութական արժեքների նկատմամբ, որոնք կարող են կիրառվել ՋՈՁի կամ դրա փոխադրման միջոցների, նյութերի, սարքավորումների և տեխնոլոգիաների մշակման, ձեռքբերման, ապօրինի շրջանառության կամ օգտագործման մեջ:

- **հսկվող ապրանքների արտահանում՝** հսկվող ապրանքների դուրսհանումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից.

- **հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրում՝** Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով հսկվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմինը.

- **հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում՝** հսկվող ոչ նյութական արժեքների բանավոր, գրավոր, էլեկտրոնային հաղորդակցության կամ հեռահաղորդակցության համակարգի միջոցներով հաղորդումը, տրամադրումը, ինչպես նաև որևէ այլ ձևով մատչելի դարձնելը այլ անձանց Հայաստանի Հանրապետության սահմանից դուրս.

- **մասնագիտական փորձաքննություն՝** հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների նույնականացման մասնագիտական հետազոտություն.

- **շրջանառության հսկողություն՝** սույն օրենքով սահմանված կարգով հսկվող ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ



փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման նկատմամբ կիրառվող միջոցառումների համակարգ, որի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը.

- **վերջնական օգտագործող՝** օտարերկրյա պետություն, օտարերկրյա պետության իրավաբանական և ֆիզիկական անձ, որը Հայաստանի Հանրապետությունից արտահանվող կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող հսկվող ապրանքի, ինչպես նաև հսկվող ոչ նյութական արժեքների իրական օգտագործողն է.

- **վերջնական օգտագործում՝** վերջնական օգտագործողի կողմից հսկվող ապրանքի և հսկվող ոչ նյութական արժեքների կիրառում՝ հայտարարագրված նպատակին համապատասխան.

- **վերջնական օգտագործողի հավաստագիր՝** հսկվող ապրանքներ և (կամ) հսկվող ոչ նյութական արժեքներ ստացող պետության կամ այդ պետության անձի (իրավաբանական կամ ֆիզիկական) անվանման, դրա գտնվելու և գործունեության վայրի մասին, արտահանվող հսկվող ապրանքների կամ փոխանցվող հսկվող ոչ նյութական արժեքների նկարագրի մասին, այդ ապրանքների, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքների վերջնական օգտագործման նպատա-



կի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը նաև հավաստում է, որ նշված ապրանքները և (կամ) տեղեկատվությունը չեն փոխանցվի որևէ երրորդ երկիր կամ անձի կամ չեն օգտագործվի հայտարարագրված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի պետական կառավարման մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված համաձայնության: Վերջնական օգտագործողի հավաստագիրը ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում հաստատում է վերջնական օգտագործողի երկրի իրավասու պետական կառավարման մարմինը.

- **Ցանկեր՝** հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկեր, որոնցում ներառված ապրանքները վերափոխման արդյունքով կարող են հանդիսանալ հսկվող ապրանքներ.

#### **Հապավումներ**

ԱԷՄԳ - Ատոմային էներգիայի միջազգային գործակալության

ԱԽ -Ավստրալական խումբ

ԱՊՀ- Անկախ Պետությունների Համագործակցություն

ԱՏԳ – արտաքին տնտեսական գործունեություն

ԵԱՏՄ- Եվրասիական տնտեսական միություն

ԵՄ- Եվրոպական միություն

ԵվրԱզԷՄ - Եվրասիական Տնտեսական Ընկերակցությունը

ԶՈԶ- Զանգվածային ոչնչացման զենք

ՀՆԾ – Համապատասխանության ներկազմակերպական

**ծրագիր**



ՀՏՎՌ- Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմ

ՀՀ Քր. օր. - ՀՀ քրեական օրենսգիրք

ՀՀ քաղ. օր.- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

ՀՀ ՎԻՎ օր. - ՀՀ վարչական իրավախախտումների

վերաբերյալ օրենսգիրք

ՄՄ- Մաքսային միություն

ՄՄԽ- Միջուկային մատակարարների խումբ

ՑԿ-Ցանգերի կոմիտե



### **§ 3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ**

Արտահանման վերահսկողության առաջին համակարգի ձևավորման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Մասնավորապես, 1774 թ. սեպտեմբերի 5-ին, ի պատասխան բրիտանական խորհրդարանի կողմից ընդունված «Հարկադրանքի ակտերին», Առաջին մայրցամաքային կոնգրեսը հավաքվեց Ֆիլադելֆիայի Քարփենթերս սրահում և հաջորդ դեկտեմբերին բրիտանական ապրանքների ներմուծումն անօրինական հայտարարեց: Մեկ տարի անց՝ 1775 թվականին, երբ սկսվեց ամերիկյան հեղափոխությունը, Կոնգրեսն արգելեց ապրանքների արտահանումը Մեծ Բրիտանիա՝ սահմանելով առաջին արտահանման վերահսկողությունը Միացյալ Նահանգներում<sup>2</sup>:

Այլ հեղինակների կարծիքով<sup>3</sup> արտահանումը սահմանափակելու առաջին փորձերը սկսեցին 19-րդ դարի 90-ական թվականներին: 1890 թվականին ընդունվեց Բոյուսելի կոնֆերանսի Ընդհանուր ակտը, ըստ որի, մասնավորապես, արգել-

---

<sup>2</sup> Ավելի մանրամասն տես [https://www.cistec.or.jp/english/service/report/1605historical\\_background\\_export\\_control\\_development.pdf](https://www.cistec.or.jp/english/service/report/1605historical_background_export_control_development.pdf)

<sup>3</sup> Евстафьев Г.М. Нераспространение, контрраспространение. Упреждение Материалы II Московской международной конференции по нераспространению (сентябрь 2003 г.). Терёхин Н.В. Правовой анализ развития и функционирования системы экспортного контроля США за передачей продукции двойного назначения // Инвестиции в России. 2004. № 7





վում էր զենքի մատակարարումը աֆրիկյան երկրներին: Անհրաժեշտ էր կանխել զենքի տեղափոխումը և խոչընդոտել ազգային-ազատագրական շարժումների առաջխաղացումը: Սակայն այս պայմանագիրը որևէ էական իրավական հետևանքների չհանգեցրեց: 1906 թ. ընդունվեց Մարոկկոյի հիմնախնդիրների վերաբերյալ Ալխեսիրասի կոնֆերանսի Գլխավոր ակտը, որը, ի թիվս այլի, ուղղված էր Մարոկկոյում հրազենի մաքսանենգության դեմ պայքարին: 1919 թվականին Ազգերի լիգան ընդունեց «Ձենքի և զինամթերքի առևտրի վերահսկման մասին» կոնվենցիան, որը նախատեսում էր զենքի արտահանման համար թույլտվություն ստանալու իմպերատիվ պարտավորություն: Մշակվեց ապրանքների հատուկ ցուցակ, որոնց վաճառքի համար անհրաժեշտ էր թույլտվություն ստանալ ազգային կառավարությունից: Սա զենքի արտահանման միջազգային վերահսկողության համակարգ ստեղծելու առաջին փորձն էր: Սակայն այս համաձայնագիրը նույնպես գործնականում չիրականացվեց:

1925 թվականին ընդունվեց «Ձենքի, զինամթերքի և ռազմական մատակարարումների միջազգային առևտրի վերահսկման մասին» կոնվենցիան, որն ուղղված էր սովորական զենքի վաճառքի նկատմամբ միջազգային վերահսկողության հաստատմանը: Սակայն այն նույնպես չվավերացվեց և ուժի մեջ չմտավ, քանի որ մի շարք երկրներ հրաժարվեցին ստեղծել հսկող մարմիններ և որոշել որոշակի զենքի մատակարարում-



ների իրագործելիությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսեց արտահանման վերահսկողության համակարգերի ներկայիս հայեցակարգի ձևավորումը:

Արտահանման միջազգային վերահսկողության միասնական մեխանիզմի ստեղծումը սկսվեց 20-րդ դարի երկրորդ կեսի սկզբից և կապված էր արևմտյան երկրներում մասնագիտացված մարմնի ձևավորման հետ: 1949 թվականին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց Արտահանման հսկողության կոորդինացիոն կոմիտե ( ավելի հայտնի ինչպես COCOM): Դրա ստեղծմամբ առաջին անգամ միջազգային մակարդակով արտահանման հսկողության կարգավորման ընթացակարգերը տարածվեցին ոչ միայն ռազմական արտադրանքի, այլ նաև երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների վրա: Միևնույն ժամանակ կարելի է փաստել, որ իրավական հիմքերը սկսեցին ձևավորվել 1951 թվականից, երբ ԱՄՆ-ի կոնգրեսը ընդունեց Փոխադարձ պաշտպանության աջակցության վերահըսկման ակտը, որը ավելի հայտնի էր որպես «Բեթլի ակտ», որը էմբարգո սահմանեց ԱՄՆ-ից ԽՍՀՄ և այլ սոցիալիստական երկրներ, այսպես կոչված, ռազմավարական ապրանքների արտահանման վրա և սահմանափակեց մնացած բոլոր ապրանքների արտահանումն այդ երկրներ: Այն նաև նախատեսում էր, որ ամերիկյան ռազմական, տնտեսական և ֆինանսական օգնություն կտրամադրվի միայն այն երկրներին, որոնք նմանա-



տիպ էմբարգո կսահմանեն սոցիալիստական երկրների հետ առևտրի վրա<sup>4</sup>: Հարկ է նշել, որ 1979 թվականին Միացյալ Նահանգներն ընդունեցին արտահանման կարգավորման օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով (1985 և 1988 թվականներին), որը ընկած է ԱՄՆ-ի հումքի, նյութերի, սարքավորումների և երկակի նշանակության տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության ժամանակակից համակարգի հիմքում:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ արտահանման վերահսկման համակարգեր և համապատասխան օրենսդրական հիմքեր սկսեցին ձևավորվել ՆԱՏՕ-ի անդամ պետություններում (ինչպես նաև Ավստրալիայում և Ճապոնիայում): 1960-ականների կեսերին ՆԱՏՕ-ի գրեթե բոլոր անդամ պետություններում արտահանման վերահսկման համակարգերը ստացավ իր օրենսդրական հիմքեր՝ ունենալով ազգային աննշան բնութագրերը:

Շրջանառության հսկողության, այդ թվում արտահանման վերահսկողության համակարգերի անհրաժեշտությունը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային համակարգերում սկիզբ դրեց նոր հայցեակարգերի և նոր միավորումների՝ ռեժիմների, կազմակերպությունների ձևավորմանը:

Ներկայումս միջազգային վերահսկման ռեժիմները սահ-

---

<sup>4</sup> Jackson, I. (2001). Troubled Partners: Anglo-American Relations and the Battle Act in 1952. , 90-110. [https://doi.org/10.1057/9780230510920\\_7](https://doi.org/10.1057/9780230510920_7).



մանում են որոշակի չափանիշներ, որոնք կոչված են աջակցելու պետություններին ձևավորելու անվտանգ պայմաններ և իրավական էֆֆեկտիվ համակարգ, ինչպես նաև նպաստում են տեղեկատվության փոխանակմանը: Հարկ է նշել, որ ներկայումս գործում են 4 միջազգային վերահսկման ռեժիմներ<sup>5</sup>:

Միջազգային վերահսկման ռեժիմ անվանում	Ստեղծման տարին	Անդամ պետությունների քանակը	Գործունեության հիմնական ուղղությունները
Վասենարյան պայմանավորվածություններ <sup>6</sup>	1996	33 (ՀՀ-ն չի անդամակցում)	Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների և սովորական սպառազինությունների արտահանման նկատմամբ վերահսկողության ապահովում
Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմ <sup>7</sup>	1987	35 (ՀՀ-ն չի անդամակցում)	Ապահովում է հրթիռային տեխնոլոգիաների, ինչպես նաև հրթիռային զենքի ստեղծման մեջ օգտագործվող ապրանքների և տեխնոլոգիաների

<sup>5</sup> Achilleas, P. (2017). Introduction Export Control. , 3-16.  
[https://doi.org/10.1007/978-981-10-5960-5\\_1](https://doi.org/10.1007/978-981-10-5960-5_1).

<sup>6</sup> Ավելի մանրամասն տես <https://www.wassenaar.org/>

<sup>7</sup> Ավելի մանրամասն տես <https://www.mtcr.info/en>



			տարածման վերահսկողությունը և սահմանափակումը
Միջուկային մատակարարների խումբ	1974	48 (ՀՀ-ն չի անդամակցում)	Ապահովում են միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանման վերահսկողությունը
Ցանգերի կոմիտե	1976	39 (ՀՀ-ն չի անդամակցում)	Ապահովում են միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանման վերահսկողությունը
Ավստրալական խումբ	1985	43 (ՀՀ-ն չի անդամակցում)	Ապահովում է քիմիական և կենսաբանական զենքի և դրա տարրերի չտարածման հետ կապված արտահանման վերսահկումը

Յուրաքննաչյուր ռեժիմում սահմաված է խորհրդատվության և տեղեկատվության փոխանակման համապատասխան մեխանիզմ, ինչպես նաև կառավարման և որոշումների ընդունման



համապատասխան ընթացակարգեր: Անդամ պետությունները պարտավորվում են իրար փոխանցել արտահանման թույլտվության մերժման դեպքերի վերաբերյալ ծանուցում:

### **Վասենաարյան պայմանավորվածություններ**

Սովորական սպառազինությունների և երկակի նշանակության ապրանքների ու տեխնոլոգիաների արտահանման վերահսկողման Վասենաարյան պայմանավորվածությունների ռեժիմը ստեղծվել է 1995-ի դեկտեմբերին Վասենաար քաղաքում<sup>8</sup>: Վերջինս կոչված էր փոխարինելու Արտահանման հսկողության կոորդինացիոն կոմիտեին, որի անդամ պետությունները սկսեցին անդամակցել նոր ռեժիմին: Վասենաարյան պայմանավորվածությունների անդամ պետությունները փորձում են վերահսկել երկակի նշանակության տեխնոլոգիաների տարածումը մի շարք մեխանիզմների միջոցով, ներառյալ այսպես կոչված «բաշխված վերահսկումը», անդամ երկրների միջև տեղեկատվության փոխանակումը և ոչ անդամ պետություններին երկակի նշանակության ապրանքների արտահանման թույլտվության կամ մերժման վերաբերյալ ծանուցումը<sup>9</sup>:

---

<sup>8</sup> Stu Davis, L. (1996). The Wassenaar Arrangement, Strategic Comments, 2:7, 1-2, DOI: [10.1080/1356788960274](https://doi.org/10.1080/1356788960274)

<sup>9</sup> Stu Jaffer, J. (2002). Strengthening the Wassenaar Export Control Regime. *Chicago Journal of International Law*, 3, 22.



Կարելի է առանձնացնել Վասենաարական պայմանավորվածությունների հետևյալ հիմնական նպատակները՝

1. Զենքի և «զգայուն» ապրանքների տեխնոլոգիաների արտահանման, տարանցիկ փոխադրման նկատմամբ ավելի մեծ թափանցիկության և պատասխանատվության ապահովում

2. Ռազմական նպատակներով երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների մատակարարման բացառում այն երկրներ, որոնց քաղաքականությունը Վասենաարական պայմանավորվածությունների մասնակիցների և համաշխարհային հանրության լուրջ մտահոգության տեղիք են տալիս:

3. Տեղեկատվության փոխանակման ապահովում, ինչպես նաև երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկման ոլորտում ազգային միասնական քաղաքականության իրականացման հնարավորություն: Այս համատեքստում հարկ է նշել, որ Վասենաարական պայմանավորվածությունները ուղղված չեն որևէ կոնկրետ պետության կամ պետությունների խմբի դեմ<sup>10</sup>:

---

<sup>10</sup> Ավելի մանրամասն տես <https://www.wassenaar.org/>



## **Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմ**

Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման միջազգային ռեժիմը ստեղծվել է 1987 թվականին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ՝ միջուկային զենքի չտարածման քաղաքականության շրջանակներում: Հարկ է նշել, որ անդամ պետությունների կողմից հրթիռային տեխնոլոգիաների հետ կապված սարքավորումների և տեխնոլոգիաների փոխանցման վերաբերյալ մշակված սկզբունքները որևէ կերպ ուղղված չեն տիեզերքի օգտագործման ոլորտում ազգային տիեզերական ծրագրերին կամ միջազգային համագործակցության խոչընդոտմանը, եթե նման ծրագրերի իրականացումը չի նպաստում զանգվածային ոչնչացման զենքերի փոխադրման միջոցների ստեղծմանը<sup>11</sup>:

## **Միջուկային մատակարարների խումբ**

Միջուկային զենքի չտարածման ոլորտում միջազգային վերահսկման ռեժիմ՝ միջուկային մատակարարների խմբի գործունեության իրավական հիմքը Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրն է, որը ԶՈՁ-ի չտարածմանն ուղղված միջազգային առաջին փաստաթղթերից մեկն է համարվում:

Պայմանագրում ձևակերպված են այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա անդամ պետությունները պարտավոր-

---

<sup>11</sup> Ավելի մանրամասն տես <https://www.mtcr.info/en>





վում են պահպանել նշված պայմանագրի պայմանները՝

- միջուկային պատերազմը և միջուկային զենքի տարածումը կանխելու անհրաժեշտությունը.
- խաղաղ նպատակով միջուկային տեխնոլոգիաների կիրառում և այդ նպատակով գիտական տեղեկատվության ամբողջական փոխանակումը.
- օգնություն միջուկային զենքի արտադրության դադարեցման հարցում,
- ընդհանուր և ամբողջական զինաթափում և միջուկային զենքի բոլոր փորձնական պայթյունների դադարեցում:

Միջուկային մատակարարների խմբի մշտական մարմիններն են երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների խորհրդատվական խորհուրդը և տեղեկատվության փոխադարձ փոխանակման խորհուրդը:

Հարկ է նշել, որ կազմաերպությունն իր գործունեությունն իրականացնում է համաձայն՝

- Խորհրդատվության և տեղեկատվության փոխանակման ընթացակարգի վերաբերյալ ուղեցույց դրույթներով, որոնք ընդունվել են 1992 թվականին Վարշավայում և իրականացվում են արտահանման վերահսկողության ազգային համակարգերի միջոցով,
- ՄԱԳԱՏԷ-ի տեղեկատվական շրջաբերականների, ինչպես նաև միջուկային նյութերի ու ատոմային էներգիայի հետ կապված երկակի նշանակության ապրանքների



արտանման վերաբերյալ ուղեցույցների կարգավորումներով:

### **Ցանգերի կոմիտե**

Ցանգերի կոմիտեն համարվում է ոչ ֆորմալ կազմակերպություն, որի հիմնական խնդիրն է միջուկային նյութերի և սարքավորումների կատեգորիային պատկանող կամ տրոհվող նյութերի մշակման, օգտագործման կամ արտադրության համար ստեղծված ապրանքների և տեխնոլոգիաների սահմանումը և չափորոշումը:

Կոմիտեն կազմված է 39 անդամ պետություններից, որոնք տարեկան երկու անգամ քննարկում են՝

- միջուկային նյութերի և սարքավորումների կատեգորիային պատկանող կամ տրոհվող նյութերի մշակման, օգտագործման կամ արտադրության համար ստեղծված ապրանքների և տեխնոլոգիաների սահմանմանման և չափորոշման կապակցությամբ միասնական մոտեցման ձևավորման հետ կապված հարցեր
- միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի համատեքստում միջուկային նյութերի և որոշակի տեսակի սարքավորումների արտահանման ընթացակարգերի մշակում<sup>12</sup>:

---

<sup>12</sup> Ավելի մասնամասն տես <https://zanggercommittee.org/>



## Ավստրալական խումբ

Ավստրալական խումբը պետությունների ոչ պաշտոնական ֆորում է, որոնք արտահանման վերահսկողության կանոնների համաձայնեցման միջոցով ձգտում են կանխել քիմիական և կենսաբանական զենքի մշակումն ու տարածումը: Այն ստեղծվել է 1985 թվականին և վերջինիս ստեղծմանը նախորդել է Իրաքի կողմից քիմիական զենքի կիրառումը: Խումբը, որն ի սկզբանե ներառում էր 15 մասնակից: 2018 թվականի հունվարի 19-ին Հնդկաստանի անդամակցությունից հետո խմբում ընդգրկված է 43 անդամ: Բացի առանձին երկրներից, այն ներառում է Եվրոպական հանձնաժողովը: Խումբը ստեղծվել է մասնակից պետություններին նյութերի հայտնաբերման եւ վերահսկման հարցում օգնելու համար, քիմիական եւ կենսաբանական զենքի տարածումը կանխելու նպատակով:

Ազգային արտահանման վերահսկման միջոցառումների համակարգումն օգնում է Ավստրալական խմբի անդամ երկրներին ամբողջությամբ կատարել իրենց պարտավորությունները՝ ղեկավարվելով Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման, արգելման և դրա ոչնչացման մասին կոնվենցիայի և Մանրէաբանական (կենսաբանական) և թունավորող նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին կոնվենցիայի կարգավորումներով:



Հայաստանը չի անդամակցում արտահանման միջազգային վերահսկման այնպիսի ռեժիմների, ինչպիսիք են Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմը, Միջուկային մատակարարների խումբը, Ցանգերի կոմիտեն և Ավստրալական խումբը: Դրա առաջնային պատճառն այն է, որ Հայաստանը չի հանդիսանում վերահսկվող կամ ռազմական նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների խոշոր արտադրող երկիր, և այս ռեժիմներին անդամակցելը չի համապատասխանում երկրի տնտեսական ուղղվածությանը: Սակայն դա որևէ կերպ չի խոչընդոտում վերոնշյալ ռեժիմների նպատակներին և սկզբունքներին հավատարիմ լինելու ՀՀ դիրքորոշմանը:

Հայաստանը մեծ ուշադրություն է դարձնում երկակի նշանակության ապրանքների վերահսկողության ազգային մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

Համապարփակ պատկերացում ունենալու մասին անհրաժեշտ է անդրադառանլ նաև ԽՍՀՄ-ում ստեղծված արտահանման վերահսկողության համակարգին, որը ստեղծվեց ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1981 թվականի հունիսի 16-ի թիվ 560-170 որոշմամբ՝ որպես հակակշիռ Արտահանման հսկողության կոորդինացիոն կոմիտեին: Արտահանման վերահսկման համակարգը և իրականացման առանձնահատկությունները կրում էին ոչ հրապարակային բնույթ:

Ստեղծվել էր ԽՍՀՄ արտահանման վերահսկողության հանձնաժողով, որում ընդգրկված էին բոլոր շահագրգիռ նա-



խարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչները, իսկ շահագրգիռ նախարարություններում և գերատեսչություններում հիմնվել էին արտահանման վերահսկման համար պատասխանատու ստորաբաժանումներ:

Կարևոր է նշել, որ հսկվող ցանկերը ձևավորվել էին հանձնաժողովի անդամ նախարարությունների և գերատեսչությունների առաջարկված անվանացանկերից: Լիազոր մարմնի ֆունկցիաների մի մասն իրականացնում էր ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարությունը, որի հանձնարարականի հիման վրա արդյունաբերական ձեռնարկությունները և գիտական կազմակերպությունները ստիպված էին փորձաքննություն անցկացնել իրենց արտադրած ամբողջ արտադրանքի, ինչպես նաև իրականացվող գիտահետազոտական աշխատանքների և մշակումների վերաբերյալ՝ պարզելու համար վերջիններիս պատկանելիությունը հսկվող ցանկերին: Ցանկերը և վերջիններիս լրացումներն ու փոփոխություններն ամեն տարի հաստատվում էին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ:

Եթե, այսպես կոչված, թույլատրելի ապրանքների արտահանումը որևէ բարդություն չէր ներկայացնում, ապա հսկվող ցանկերում ներառված ապրանքներից յուրաքանչյուրի վերաբերյալ անհրաժեշտ է առանձին կառավարության որոշումը, ինչը, բնականաբար, շատ դժվար էր ստանալ պրակտիկ տեսանկյունից: Հարկ է նշել, որ կարգավորումների համաձայն՝ նման ո-



րոշումներն ընդունվում էին 20 աշխատանքային օրվա ընթացքում:

1991 թվականից հետ, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը, վերջինիս արտահանման վերահսկման համակարգի առանձնահատկությունները, սկզբունքները, տարրերը տրոհվեցին անդամ պետությունների միջև, և յուրաքնայնորը սկսեց համակարգչի իմպլենտացման գործընթացը: Հայաստանը նույնպես սկսեց ձևավորել շրջանառության, այդ թվում՝ արտահանման, վերահսկման իր համակարգը:



## **§ 4. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

Ինչպես հայտնի է արտահանման վերահսկողությունը Հայաստանում ուղղված է ազգային շահերի պաշտպանությանը և միջազգային պարտավորությունների կատարմանը՝ կարգավորելով հսկվող ապրանքների, սարքավորումների, տեխնոլոգիաների, ոչ նյութական արժեքների, այդ թվում՝ տեղեկատվության և մտավոր սեփականության արդյունքների արտահանումը և ՀՀ-ի տարածքով տարանցիկ փոխանցումը: Հայաստանում արտահանման վերահսկողության համակարգը, որն ի սկզբանե հիմնված էր խորհրդային դարաշրջանի ինստիտուտների վրա, զարգացել է երկրի սոցիալ-տնտեսական, արտաքին և ներքին քաղաքական պահանջներին համապատասխան: Զգալի փոփոխություններ են կատարվել արտահանման վերահսկման ազգային մեխանիզմն ու մեթոդները նոր պայմաններին հարմարեցնելու և դրանք ռազմավարական շահերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Կիրառելով արտահանման վերահսկողության ժամանակակից միջոցներ՝ ՀՀ-ն ձգտում է պաշտպանել ազգային անվտանգությունը և նպաստել տարածաշրջանային և միջազգային կայունությանը:

Հայաստանի Հանրապետությունում արտահանման վերահսկողության իրականացման օրենսդրական կարգավորման սկիզբը դրվել է 01.05.1993 թվականին ՀՀ նախագահի թիվ



ՆՀ-227 «ՀՀ-ից հատուկ նշանակության հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների, գիտատեխնիկական ինֆորմացիայի և ծառայությունների արտահանման վերահսկողության իրականացման մասին» հրամանագրով, որի համաձայն՝ զանգվածային ոչնչացման ու առավել վտանգավոր այլ զենքեր չտարածելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման և Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություններ հատուկ նշանակության հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների, գիտատեխնիկական ինֆորմացիայի և ծառայությունների, որոնք կիրառելի են զինամթերքի կամ ռազմական տեխնիկայի ստեղծման համար, ինչպես նաև այն հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների, գիտատեխնիկական ինֆորմացիայի ու ծառայությունների, որոնք ունեն խաղաղ նշանակություն, բայց կարող են կիրառվել միջուկային, հրթիռային, քիմիական և զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքերի ստեղծման համար, արտահանումը (փոխանցումը և փոխանակումը) կարգավորելու նպատակով ատեղծվում էր Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր արտահանման վերահսկողության հանձնաժողով՝ փոխվարչապետի նախագահությամբ:

Նույն որոշմամբ ստեղծվեց նաև փորձագիտական խորհուրդ, որի կազմում ներգրավել էին Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի, Հայաս-





տանի Հանրապետության Արտաքին գործերի, Էկոնոմիկայի, Պաշտպանության, արդյունաբերության, էներգետիկայի և վառելիքի, բարձրագույն Կրթության և գիտության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության պետական վարչության, Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատասխանատու մասնագետները: Հարկ է նշել, որ նույն որոշմամբ հանձնաժողովին վերապահված էր մշակել և կառավարության հաստատմանը ներկայացնել Հանրապետությունում գոյություն ունեցող այն հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների, գիտատեխնիկական ինֆորմացիայի ու ծառայությունների անվանացանկը, որոնք կարող են կիրառվել («կրկնակի նշանակության» արտադրանք) միջուկային, քիմիական և զանգվածային ոչնչացման այլ զենքերի ստեղծման համար:

Հատկանշական է, որ վերը նշված հրամանագրում առաջին անգամ տրվեց երկակի նշանակության բնորոշումը, չնայած որ որպես տերմին օգտագործվում էր «կրկնակի նշանակության արտադրանք» եզրույթը:

Նույն տարում, 28 հուլիսի 1993 թվականին թիվ 391 որոշմամբ սահմանվեցին վերը նշված հանձնաժողովի հիմնական խնդիրները, ֆունկցիաները և իրավունքները: Հարկ է նշել, որ նույն տարում ՀՀ կառավարությունն ընդունեց նաև «Միջուկային, քիմիական և զանգվածային ոչնչացման այլ զենքերի ստեղծման դեպքում կիրառվող հումքերի, նյութերի, սարքավոր-



րումների, տեխնոլոգիաների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N 487 որոշումը, որով սահմանվեցին հսկվող ապրանքների ցանկերը: Սակայն հաջորդիվ կարգավորումները շարունակվեցին 1999 թվականից: Այս համատեքստում կարևոր է անդրադառանալ այդ ժամահակատահվածում ՀՀ-ում տիրող քաղաքական իրավիճակին:

1991թ. սեպտեմբերին հռչակելով իր անկախությունը Խորհրդային միությունից՝ Հայաստանը կենտրոնացած էր որպես անկախ պետություն իր դիրքերի ամրապնդման և ժողովրդավարական պետության հիմքերի ստեղծման վրա: Սաներառում էր քաղաքական ինստիտուտների զարգացում, Սահմանադրության մշակում և տնտեսական բարեփոխումների խթանում: 1993 թվականին Հայաստանի քաղաքական կյանքում գերիշխում էր Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը, Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև տարածքային վեճը: Լեոնային Ղարաբաղի պատերազմը հանգեցրել է լուրջ հումանիտար ճգնաժամի, որի հետևանքով հազարավոր մարդկանց տեղաշարժեր և լայնածավալ ավերածություններ են տեղի ունեցել: Հայաստանը բախվել է տուժած բնակչությանը օգնություն և ապաստան տրամադրելու դժվարին խնդրին: Բացի այդ, երկիրը բախվել է տնտեսական դժվարությունների և քաղաքական լարվածության, ներառյալ հակամարտության կարգավորման շուրջ տարածայնությունները, և կոչ է անում կառավարությունում ավելի մեծ թափանցիկության և հաշվետվողականության: Քաղաքական ղեկավարությունը ձգտում էր Հայաս-




տանը հաստատել որպես ժողովրդավարական պետություն և փոխգործակցություն հաստատել միջազգային հանրության հետ : Ջանքեր են գործադրվել դիվանագիտական կապերի ամրապնդման և օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ՝ նպաստելու երկրի տնտեսական վերականգնմանը:

Այլ կերպ ասած, ներոնշյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում, տրամաբանորեն, արտահանման վերահսկողության օրենսդրական համապատասխան բազայի ստեղծումն առաջնահերթություն չէր համարվում:

Արտահանման վերահսկման իրականացման իրավական կարգավորման հաջորդ փուլը սկսվեց 1999 թվականին: ՀՀ կառավարության 1999 թվականի փետրվարի 8-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի մասին» թիվ 59 որոշմամբ ձևավորվեց արտահանման վերահսկողության նոր հանձնաժողով՝ կազմված ոլորտի հետ առնչություն ունեցող գերատեսչությունների ներկայացուցիչներից: Վերջինիս լիազորությունները, իրավունքները և պարտականությունները սահմանվեցին ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի կանոնադրության հաստատելու մասին» թիվ 190 որոշմամբ:

Կարևոր է անդրադառնալ ՀՀ կառավարության 1999 թվականի հուլիսի 19-ին թիվ 463 որոշմանը, որտեղ հաստատվեցին հսկողության հիմնական մեխանիզմի՝ թույլտառվության



տրման կարգը և առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ նույն որոշմամբ սահմանվեցին մի շարք կարևոր հասկացություններ (Վերջնական օգտագործող, Չանվաճային ոչնչացման գեներ, ՁՈՁ-ի փոխադրամիջոցներ), հաստատվեցին հսկվող ապրանքների ցանկերը և հայտի ձևը (նկ.1):

Հ Ա Յ Տ Ն

24

Երկաթի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների հայաստանի հանրապետությունից արտահանման ինչպես նաև, հայաստանի հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման թույլտվություն ստանալու համար

1999 թ.

<p>1. Հայաստան</p> <p>Երկիրը Հասցեն Գեոախտահամարը Ֆաքսի համարը</p>	<p>հարկային մաս- կազմից (իրա- բանական անձի և անհատ ընկեր- վառուից համար) անձնագրի N-ը, սեփական (ֆինանսական անձի համար)</p>	<p>6. Գործառքը հիմնավորող փաստաթղթերը</p>
<p>2. Ապրանքի (տեխնոլոգիայի) սեփա- կանատեր</p> <p>Երկիրը Հասցեն Գեոախտահամարը Ֆաքսի համարը</p>	<p>հարկային մաս- կազմից (իրա- բանական անձի և անհատ ընկեր- վառուից համար) անձնագրի N-ը, սեփական (ֆինանսական անձի համար)</p>	<p>7. Ներմուծողը (գնորդը)</p> <p>Երկիրը Հասցեն Գեոախտահամարը Ֆաքսի համարը</p>
<p>3. Ապրանքի (տեխնոլոգիայի) ծագման երկիրը</p> <p>4. Ապրանքի (տեխնոլոգիայի) մաքսային տեղավորման ոճիժնը (ադատահանում, ժամանակավոր արտահանում, տարանցիկ փոխադրում)</p> <p>5. Ապրանքի (տեխնոլոգիայի) մաքսային ձևակերպումն իրականացնող մաքսային մարմնի անվանումը (լրացվում է միայն տարանցիկ փոխադրման դեպքում)</p>		<p>8. Վերջնական սպառողը</p> <p>Երկիրը Հասցեն Գեոախտահամարը Ֆաքսի համարը</p>
<p>9. Ապրանքի (տեխնոլոգիայի) լրիվ անվանումը և քննության 10. Ապրանքի (տեխնոլո-   11. Տարածված գտնվելու գրային ծածկագրի ռազ   ինքրական կոճ կամ ինք- ՎՏՁՆ-ի   ենթաբանակը</p>	<p>12. Չափման միավորը</p>	<p>13. Բանակը</p> <p>14. Չիճ (ապրանք- ցանկը)</p>
<p>16. Ապրանքի (տեխնոլոգիայի) օգտագործման վայրը և նպատակը</p>		<p>15. Տարտա- ման վճար- մը</p>
<p>17. Տարանցիկ փոխադրման երկիրը և միջանկյալ ապրանք ստացողները</p>		
<p>18. Լրացուցիչ տեղեկություններ (լրացնում է հայաստանը)</p>		

Դիմող կազմակերպության ղեկավար \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը) (ստորագրությունը)

4. Տ. \_\_\_\_\_ 1999 թ.

(նկ.1)



Անդրադառանալով ցանկերին՝ հարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը սահմանել էր 4 ցանկ, որոնք կազմված էին ենթակատեագորիաներից կամ ենթացանկերից.

- ցանկ 1- այն քիմիկատների, սարքավորումների և տեխնոլոգիաների, որոնք ունեն խաղաղ նշանակություն, բայց կարող են կիրառվել քիմիական զենքի ստեղծման ժամանակ, և որոնց արտահանումն իրականացվում է թույլտվությամբ,
- ցանկ 2- հրթիռային զենքի ստեղծման ժամանակ օգտագործվող այն նյութերի, սարքավորումների և տեխնոլոգիաների, որոնց արտահանումն իրականացվում է թույլտվությամբ,
- ցանկ 3 -միջուկային զենքի ստեղծման ժամանակ օգտագործվող նյութերի, սարքավորումների և տեխնոլոգիաների, որոնց արտահանումն իրականացվում է թույլտվությամբ
- ցանկ 4- թունավոր ու բակտերիոլոգիական (կենսաբանական) զենքի ստեղծման ժամանակ օգտագործվող՝ մարդու, կենդանիների և բուսականության, նրանց գենետիկ փոփոխված ձևերի (ախտածինների) հիվանդությունների հարուցիչների, գենետիկական նյութերի հատվածների ու սարքավորումների, որոնց արտահանումն իրականացվում է թույլտվությամբ:

Արդեն 2000-ականներին Հայաստանը համաձայնեց միա-



նալ երկակի և ռազմական նշանակության ապրանքների արտահանման կամ տարանցիկ փոխադրման նկատմամբ խիստ հսկողության ամերիկյան համաձայնագրին, մասնավորապես 2000 թվականի հուլիսի 24-ին Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրին, որն առավել հայտնի է Հովանոցային համաձայնագիր անունով: 2002-ին ուժի մեջ մտած համաձայնագիրը նպատակ ունի կանխելու զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, ինչպես նաև այդպիսի զենքի հետ անմիջականորեն կապված տեխնոլոգիաների, նյութերի, գիտելիքների ու փորձի տարածմանը հակազդելու, միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի, ինչպես նաև այդպիսի զենքերին անմիջականորեն վերաբերող հումքի չարտոնված փոխանցումը, տարանցումը, փոխադրումը:

Հարկ է նշել, որ թեև Հայաստանը չի հանդիսանում վերահսկվող կամ ռազմական նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների խոշոր արտադրող երկիր, սակայն երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրումը պատժամիջոցների տակ գտնվող երրորդ երկրին, պատճառ է դարձել, որ հայկական ընկերությունները ևս հայտնվեն ամերիկյան



և եվրոպական սանկցիաների տակ: Դեռևս 2002 թվականի մայիսին ԱՄՆ կառավարության պաշտոնական տեղեկագրում, ի թիվս 12 իրավաբանական և ֆիզիկական անձանց, հրապարակվել էր նաև հայկական ընկերության անունը, որը երկակի, այսինքն՝ քաղաքացիականից բացի նաև ռազմական նշանակություն ունեցող տեխնոլոգիաներ է արտահանել Իրան, և, ըստ Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի, նպաստել է այդ երկրի կողմից զանգվածային ոչնչացման զենքի մշակման ծրագրերին: Ասվածը վերաբերում է Չարենցավանի «Լիզին» գործարանին, որտեղից 2001թ. կեսերին Արաբական էմիրություններում գրանցված մի ընկերությանը սարքավորումներ էին վաճառվել, որի վերջնական օգտագործողը հանդիսացել էր Իրանը, որն ԱՄՆ-ի սանկցիաների տակ է մինչ օրս: Բանն այն է, որ այդ սարքավորումները, որոնք օգտագործում են կենսաբանական գործընթացներում՝ այսպես կոչված բիոռեակտորները, հնարավորություն էին ընձեռում արտադրել ոչ միայն լիզին, այլև հակաբիոտիկներ և այլ երկակի նշանակության նյութեր:

Այս իրադարձությունների համատեքստում հսկվող ապրանքների և ոչ նյութական արժեքների արտահանման իրավական կարգավորումը դարձավ անհետաձգելի անհրաժեշտություն: 2003 թվականին սեպտեմբերի 4-ի թիվ 1120-Ա որոշմամբ «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վե-



րահսկողության մասին» ՀՀ օրենքը դասվեց անհետաձգելի օրենքների շարքում և ներկայացվեց հաստատման: Այսպիսով, ՀՀ-ում 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունվեց «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» օրենքը, որը սահմանում էր երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության բնագավառում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները, վերահսկվող ապրանքներ արտահանող սուբյեկտների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև կարգավորում էր երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և վերահսկվող ապրանքներ արտահանող սուբյեկտների միջև հարաբերությունները: Նույն օրենքը սահմանում էր նաև արտահանման վերահսկողության հանձնաժողովի լիազորությունները: Վերջինս ստեղծվել էր արտահանման վերահսկողության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գործունեության և արդյունավետ համագործակցության ապահովման, ինչպես նաև արտահանման վերահսկողության ուղղությամբ աշխատանքների կազմակերպչական-մեթոդական ղեկավարումն իրականացնելու





նպատակով: Ըստ վերը նշված օրենքի՝ հանձնաժողովի գործառույթներն էին՝

1) Հայաստանի Հանրապետությունում արտահանման վերահսկողության զարգացման և կատարելագործման ուղղությամբ միջոցառումների մշակումը.

2) վերահսկվող ապրանքների ցուցակների մշակման աշխատանքների իրականացումը.

3) վերահսկվող ապրանքների արտահանման թույլտվության տրամադրումը կամ մերժումը.

4) մասնակցությունը արտահանման վերահսկողության ոլորտում միջազգային համագործակցության հարցերի քննարկմանը.

5) արտահանման վերահսկողության ոլորտում գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների տարածայնությունների քննարկումը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանաձև կարգով արտահանող սուբյեկտների հաշվառման իրականացումը.

7) արտահանող սուբյեկտներին արտահանման վերահսկողության վերաբերյալ օրենսդրության և արտահանման վերահսկողության միջազգային ռեժիմների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը.

8) վերահսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման վերաբերյալ արտահանող սուբյեկտի ծանուցումների ընդու-



նումը և գրանցումը, արտահանման վերահսկողության գործընթացի մասնակից իրավասու մարմիններին տեղեկատվության տրամադրման կազմակերպումը:

Նույն օրենքով սահմանված էր նաև թույլտվության տրման կարգը, առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ տարածքով հսկվող ապրանքների տարանցիկ տեղափոխման կարգը:

2003 թվականից սկսած՝ ընդունվեցին մի շարք նորմատիվ իրավական ակտեր, որոնք հիմնված էին վերը նշված օրենքի վրա: Այսպես՝ հանձնաժողովի կազմ, գործունեության առանձնահատկությունները, անդամների իրավունքները և պարտականությունները սահմանվեցին 19 փետրվարի 2004 թվականի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց տարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովի կանոնակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 212-Ն որոշումը:

Հիմք ընդունելով վերը նշված օրենքի կարգավորումները՝ ՀՀ կառավարությունը հաստատեց երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման ցանկերը, որոնք փոխարինեցին ՀՀ կառավարության 1999 թվականի հուլիսի 19 թիվ 463 որոշմամբ հաստատված ցանկերին: Այս համատեստում կարևոր է նշել, որ հսկվող ապրանքների ցանկերը փոփոխվել են որոշակի պարբ-



րականությամբ, ինչը կապված էր տեխնոլոգիաների և ապրանքների փոփոխության ու կատարելագործման հետ, որոնց կանդրադառնանք հաջորդ գլխում:

Նույն տարում՝ 2004 թվականի մայիսի 20-ին, ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին» որոշումը, որով սահմանվեցին հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգն ու պայմանները:

Հայաստանի Հանրապետությունը ՁՈՁ տարածման դեմ պայքարի և գլոբալ անվտանգության հենասյուներից մեկն է համարում 2004թ. ապրիլի 28-ի ՄԱԿ ԱԽ 1540 բանաձևը, որը վերահաստատեց միջազգային հանրության հանձնառությունը՝ պաշտպանելու ապագա սերունդները զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և ահաբեկիչների ձեռքում դրանց հայտնվելու սպառնալիքից: Բանաձևի ընդունումից ի վեր Հայաստանը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել դրա համապարփակ իրականացման համար, մասնավորապես ընդունել և իրականացրել է 2015-2020 թվականների գործողությունների ազգային ծրագիրը, որը հնարավորություն է տվել վերանայել արդեն գոյություն ունեցող համապատասխան ներպետական օրենսդրական դաշտը և նոր իրավակարգավորումներ հաստատել միջուկային, քիմիական և կենսաբանական ոլորտներում,



ինչպես նաև արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության հարցերում:

2010 թվականի մարտի 15-ին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Ազգային ժողովում քննարկման դրվեց Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության եւ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը ընդունվեց երկրորդ ընթերցմամբ: Արդյունքում 2010 թվականի ապրիլի 8-ից սկսած՝ ՀՀ-ում գործում է «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է շրջանառության հսկողության, երկակի նշանակության ապրանքներ և երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ հասկացությունները, թույլտվությունների ստացման կարգը և առանձնահատկությունները, ինչպես նաև լիազորմարմնի լիազորությունները:

Կարևոր է նշել, որ 2010 թվականի հուլիսի 1-ի ՀՀ կառավարության «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց



տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին ճանաչելու, երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման թույլտվության տրամադրումն այլ շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցնելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի N 212-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 924-Ն որոշման համաձայն երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին ճանաչվեց Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, որի պարտավորությունների մեջ էին մտնում ինչպես քաղաքականության մշակումը, ոլորտի նկատմամբ իր իրավասությունների շրջանակներում հսկողության սահմանումը, այնպես էլ



թույլտվությունների տրամադրումը:

Նոր կարգավորումների համատեքստում թարմացվեցին գործող ցանկերը: ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ին ընդունած «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ վերահսկվող ապրանքների և տեխնոլոգիաների ցանկերը հաստատելու մասին» N 822-Ն որոշումը, որով հաստատված ցանկերի հիմքում ընկած են ԵՄ-ի 2005 թվականի համապատասխան ցանկերը, փոխարինվեցին նոր՝ թարմացված ցանկերով, որոնց հիմքում դրված էր 2009թ. մայիսի 5 թիվ 428/2009 կանոնակարգով հաստատված ԵՄ ցանկերը: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունը չի անդամակցել արտահանման միջազգային վերահսկման ռեժիմներին (Վասեսնարի համաձայնագիրը, Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմը, Միջուկային մատակարարողների խումբը, Ավստրալական խումբը եւ այլն), այնուհանդերձ տվյալ ոլորտում ՀՀ իրականացրած քաղաքականությունը համապատասխանում է վերոնշյալ ռեժիմների սկզբունքներին: Քանի որ ԵՄ-ի ցանկերը իր մեջ ներառում են նշված բոլոր ռեժիմների ցանկերը, նպատակահարմար է գտնվել ընդունել մեկ միասնական ցանկ՝ այն համապատասխանեցնելով ԵՄ համապատասխան ցանկերին:

Այսպիսով՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունվեց



Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ի N 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1785-Ն որոշումը, որտեղ ամփոփված ցանկեր վերջին անգամ թարմացվել են 2021 թվականին 1913-Ն որոշման շրջանակներում:

Այս համատեքստում կարևոր է նշել ևս մեկ որոշում, որն ընդունվեց երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Իրավիճակը պայմանավորված էր մի շարք դեպքերով, երբ Հայաստանի Հանրապետությունից արտահանել էին (կամ տարանցիկ փոխադրվում) ապրանքներ (մասնավորապես՝ ռադիոէլեկտրոնային սարքավորումներ կամ դրանց մասեր), որոնք չեն հանդիսանում ՀՀ կառավարության 01.07.2010թ. N 924-Ն որոշման շրջանակներում կարգավորման առարկա, սակայն որոշ ձևափոխումների արդյունքում կա-



րող են հանդիսանալ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-42-Ն օրենքի իմաստով հսկվող ապրանքներ և օգտագործվել ռազմական բնագավառում:

Այս իմաստով անհրաժեշտություն էր ծագել վերահսկելու այդ գործընթացները և բացառելու այդ ապրանքները՝ որպես ռազմական կամ երկակի նշանակության ապրանքներ օգտագործելու հետ կապված հնարավոր ռիսկերը: Ուստի՝ նպատակ ունենալով կանոնակարգել վերը նշված ապրանքների արտահանումը և տարանցիկ փոխադրումը, որոշվեց ուժեղացնել հսկողությունը մի շարք ապրանքների արտահանման կամ տարանցիկ փոխադրման նկատմամբ՝ սահմանելով ապրանքների ցանկ, որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ հսկվող ապրանքներ: Արդյունքում՝ 2023 թվականի մայիսի 25-ին ընդունվեց ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 808-Ն որոշումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ սույն որոշումը գործնականում առաջացնում է մի շարք բարդություններ (օրինակ՝ ավիաընկե-





րությունների համար զգայուն ապրանքների տարանցիկ փոխադրման համար թույլտվություն ստանալու գործընացը համարվում է ժամանակատար և հանգեցնում է ֆինանսական կորուստների):

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ վերը նշված օրենքով և այլ կարգավորումները ՀՀ-ի արտահանման վերահսկման համակարգը սահմանեց հստակ մեխանիզմներ և գործիքներ: Մասնավորապես՝ հստակեցվեցին թույլտվության տրամադրման ժամկետները, կարգը, մերժման հիմքերը, նախկինում լիազոր մարմնի պարտականությունները կատարող հանձնաժողովի իրավասությունները վերապահվեցին ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը, սահմանվեց «պատշաճ կերպով տեղեկացման» եզրույթը: Ավելորդ է նշել, որ նոր օրենքն առավելագույնս համապատասխանում էր միջազգային լավագույն փորձին և պահանջներին, այնուամենայնիվ, որոշ կարգավորումներ ունեն լրամշակման կարիք, որոնց անդրադառնում ենք սույն ձեռնարկի տարբեր մասերում:



## **§ 5. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ**

Ինչպես արդեն նշվեց, ցանկացած պետության արտահանման վերահսկողության ազգային համակարգի կարևորագույն տարրերից մեկը հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերն են: Վերջիններս ձևավորվել են՝ ելնելով այնպիսի ապրանքների արտահանումը վերահսկելու անհրաժեշտությունից, որոնք իրենց առանձնահատկությունների և հատկությունների շնորհիվ կարող են օգտագործվել զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

Հսկվող ապրանքների առաջին ցանկերը մշակվել են ԱՄՆ-ում, իսկ ավելի ուշ՝ 1949 թվականին, դրանց հիման վրա ստեղծվել են Արտահանման վերահսկողություն համակարգող կոմիտեի ցանկերը, որոնք կոչված էին համակարգելու իր անդամների առևտրային քաղաքականությունը և վերահսկելու ռազմավարական ապրանքների արտահանումը սոցիալիստական երկրներ: Արտահանման վերահսկողության համակարգող կոմիտեի կողմից մշակվել և հրապարակվել են երեք հիմնական ցուցակներ.

1) միջուկային էներգետիկայում օգտագործվող ապրանքներ և սարքավորումներ.

2) ռազմական ապրանքներ (զենք և զինամթերք և դրանց



արտադրության ապրանքներ)։

3) արդյունաբերական սարքավորումներ և «երկակի նշանակության» նյութեր։

Առաջին և երկրորդ ցանկերում ընդգրկված ապրանքների արտահանումն ամբողջությամբ արգելված էր, իսկ երրորդում ընդգրկված ապրանքները հնարավոր չէ արտահանել միայն հատուկ թույլտվության դեպքում։

Հետագայում արտահանման միջազգային վերահսկման ռեժիմների անդամ պետությունները սկսեցին մշակել համապատասխան ուղեցույցներ և դրանց հավելվածները՝ համապատասխան ցանկերով։

Գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ հսկվող ցանկերում փոփոխություններ և լրացումներ անելու անհրաժեշտություն է առաջանում։ Բացի դրանից, ժամանակ առ ժամանակ վերջիններիս ձևաչափը նույնպես անհրաժեշտ է լինում փոխել, ինչը պայմանավորված է հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների տարբեր ցանկերի կառուցվածքները միասնական ձևի կամ բովանդակության բերելու ցանկությամբ։ Որպես կանոն, ցանկերում փոփոխություններ կատարելու հիմքերը տարբեր են, բայց պայմանականորեն կարելի է առանձնացնել փոփոխությունների ընդամենը չորս հիմնական տեսակ՝

- 1) ցանկերի կրճատում
- 2) ցանկերի լրացում



3) հսկվող ապրանքի տեխնիկական նկարագրի և (կամ) պարամետրերի փոփոխում կամ ճշգրտում;

4) ցանկի ձևաչափի փոփոխություն:

Հսկվող ապրանքների ցանկերը հիմնականում բաղկացած են մի քանի մեծ բաժիններից, որոնք, իրենց հերթին, բաժանվում են խմբերի կամ կատեգորիաների: Յուրաքանչյուր կատեգորիա պարունակում է առանձին ապրանքներ, որոնք ներկայացված են հատուկ նույնականացման համարով, որտեղ ներառում են հսկվող ապրանքների մանրամասն տեխնիկական նկարագրությունները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դրանց պարամետրերը:

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը ՀՀ կառավարության կողմից սահմանվել են դեռևս 1999 թվականից, որոնց համար հիմք էին ծառայել ԽՍՀՄ-ի ցանկերը: 2004թ. հունիսին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում: Եվրոպական Միության նախաձեռնությամբ Հայաստանի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեցին



որակական նոր մակարդակ: Այս համագործակցությունն ազդեց նաև արտահանման վերահսկողության ոլորտի վրա: Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց նաև արտահանման հսկողության բնագավառում առկա ցանկերը ԵՄ-ի համապատասխան ցանկերին համապատասխանեցնելու քաղաքականությունը:

Ներկայումս ՀՀ-ում գործում են 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ի N 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1785-Ն որոշումը և դրանում ցանկերը, որոնք վերջին անգամ թարմացվել են 2021 թվականին 1913-Ն որոշման շրջանակներում: Հարկ է նշել, որ վերջիններիս հիմնված են մայիսի 5 թիվ 428/2009 կանոնակարգով հաստատված ԵՄ ցանկերի վրա, որոնց պարբերական փոփոխություններից ելնելով էլ տրամաբանորեն փոփոխվում են ՀՀ-ում գործող հսկվող ապրանքների ցանկերը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունից արտահան-



վող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը կազմված են հետևյալ կատեգորիաներից՝

ԿԱՏԵԳՈՐԻԱ 0	ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 1	ՀԱՏՈՒԿ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 2	ՆՅՈՒԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 3	ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 4	ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 5	ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
	ՄԱՍ 1. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ
	ՄԱՍ 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 6	ՏՎԻՉՆԵՐ ԵՎ ԼԱՋԵՐՆԵՐ



ԿԱՏԵԳՈՐԻԱ 7	ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԻԱՏԻԶԵՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 8	ԾՈՎԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԵԳՈՐԻԱ 9	ԱՎԻԱՏԻԶԵՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Նշված կատեգորիաները կազմված են խմբերից, որոնք նշում են լատինական տառերով՝

A	Համակարգեր, սարքավորում և բաղադրամասեր
B	Փորձարկային, հսկիչ և արտադրական սարքավորումներ
C	Նյութեր
D	Ծրագրային ապահովում
E	Տեխնոլոգիա

Խմբերը, իրենց հերթին, բաժանված են որոշակի տրամաբանությամբ, մասնավորապես՝

001 - 099	Վասենաարի համաձայնագիր (երկակի նշանակություն)
101 - 199	Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմը (երկակի



	նշանակություն)
201 - 299	Միջուկային մատակարարների խումբ (երկակի նշանակության)
301 - 399	Ավտոբուսային խումբ
401 - 499	Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման, արգելման և դրա ոչնչացման մասին
501 - 899	(վերապահված)
901 - 999	Ազգային վերահսկողություն

Վերը շարադրվածը ավելի հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ է այն դիտարկել օրինակով՝

**0B005 Տեղակայանքները, որոնք հատուկ նախագծված են «միջուկային ռեակտորների» վառելիքային տարրերի արտադրության համար կամ այդ նպատակի համար պատրաստված սարքավորումները:**

Որտեղ՝

կատերգորիա 0 –միջուկային նյութեր, տեղակայանքներ եվ սարքավորումներ

B խմբի ապրանք - Փորձարկային, հսկիչ և արտադրական սարքավորումներ

Հսկման «պատճառը» 005 - Վասենաարի համաձայնագիր





Բացի վերը շարադրվածից, ցանկերում երբեմն հանդիպում են մի շարք հապավումներ, որոնց բացատրությունները ներկայացված են ստորև:

**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

ABEC	Օղակաձև առանցքակալների ինժեներների կոմիտե
ADC	Անալոգից թվային ձևի փոխակերպող սարք
AGMA	Սարքավորումներ արտադրողների ամերիկյան ասոցիացիա
AHRS	Օդում կուրսային ուղղության և դիրքի տեղեկատու համակարգեր
AISI	Ամերիկայի երկաթի և պողպատի ինստիտուտ
ALE	Ատոմական շերտերի էպիտաքսիա
ALU	«Թվաբանական սարք»
ANSI	Ամերիկայի ազգային ստանդարտների ինստիտուտ
APP	Կարգավորելի պիկային կատարողականություն



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

APU	(արտադրողականություն) (էլեկտրական) Հոսանքի օժանդակ հանգույց
ASTM	Փորձարկման և նյութերի մասնագետների Ամերիկյան միություն
ATC	Օդային երթևեկության կառավարում
AVLIS	Իզոտոպների անջատում ատոմական գոլորշիով աշխատող լազերով
BJT	Երկբևեռային ծայրակցման տրանզիստորներ
BPP	Ճառագայթային պարամետրերի արդյունքը
BSC	Բազային կայանի վերահսկիչ
CAD	Ավտոմատացված նախագծման համակարգեր
CAS	Քիմիական տեղեկատվական ծառայություն
CCD	Լիցքային կապով սարք
CCITT	Միջազգային հեռագրային և



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

	հեռախոսային խորհրդատվական կոմիտե
CDU	Վերահսկման և պատկերման (արտացոլման) հանգույց (սարք)
CEP	Հավանական շրջանագծային սխալանք
CMM	Կորրոկինատների չափագրման սարք
CMOS	Կոմպլիմենտար մետաղական-օքսիդային կիսահաղորդիչ
CNTD	միջուկի բյուրեղացման կառավարելի ջերմային կազմավորում
CPLD	Համալիր ծրագրավորվող տրամաբանական սարք
CPU	Տվյալների մշակման կենտրոնական հանգույց
CRISLA	քիմիական ռեակցիա իզոտոպների սելեկտիվ լազերային ակտիվացման միջոցով
CVD	քիմիական գոլորշու կազմավորում
CW	քիմիական զենք
CW (լազերների համար)	անընդհատ ալիք
DAC	Թվայինից անալոգային ձևի փոխակերպող սարք
DANL	Դրսևորված միջին աղմուկի



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

	մակարդակը
DBRN	Տվյալների բազայով ուղղորդվող նավագնացություն (օդագնացություն)
DDS	Ուղիղ թվային սինթեզատոր
DMA	Դինամիկ մեխանիկական վերլուծություն
DME	տարածության չափիչ սարքավորում
DMOSFET	Դիֆուզված մետաղական-օքսիդային կիսահաղորդիչի դաշտի տրանզիստորային ազդեցություն
DS	ուղղորդված բյուրեղացումով
EB	Պայթուցիկ լարային կամրջակ
EB-PVD	Էլեկտրոնային ճառագայթով գազային կոնդենսացման միջոցով փոշեծածկում
EBU	Եվրոպական հեռարձակման միություն
EBW	Պայթուցիկ կամրջակի լարը
ECM	Էլեկտրոքիմիական մշակում
ECR	Էլեկտրոնային ցիկլոտրոնային ռեզոնանս
EDM	Էլեկտրական լիցքաթափման սարքավորում
EEPROMS	Էլեկտրականորեն ջնջելի ծրագրելի միայն-ընթերցելի հիշողություն



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

EFI	Պայթուցիկ թիթեղային պարպիչներ
EIA	Էլեկտրոնային արտադրողների ասոցիացիա
EIRP	Արդյունավետ իզոտրոպային ճառագայթող հզորություն
EMC	Էլեկտրոմագնիսական համատեղելիություն
ERF	Էլեկտրո-ռետլոգիական երեսապատում
ERP	Արդյունավետ ճառագայթող հզորություն
ETO	Ճառագայթիչի անջատվող տիրիստոր
ETSI	Հեռահաղորդակցման ստանդարտների Եվրոպական ինստիտուտ»
ETT	Էլեկտրականությամբ միացող տիրիստոր
FADEC	Շարժիչի լրիվ լիազորությամբ թվային վերահսկում
FPLA	Օգտատիրոջ կողմից ծրագրավորվող տրամաբանական մատրիցա
FFT	արագ փոխակերպման Ֆուրիեի ալգորիթմը
FPGA	կափույրային մատրիցա



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

FPIC	Օգտատիրոջ կողմից ծրագրավորվող փոխադարձ կապ
FPO	Լողացող պահի գործողություն
FWHM	Սպեկտրի կիսաամպլիտուդային մակարդակի ամբողջական լայնությունը
GLONASS	գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ
GNSS	Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ
GPS	Գլոբալ տեղորոշման համակարգ
GSM	Global System for Mobile Communications Շարժական կապի համաշխարհային համակարգ
GTO	Կափույրի անջատման տիրիստոր
HBT	հետերո-երկբևեռային տրանզիստորներ
HDDR	բարձր խտության թվային ձայնագրում
HEMT	էլեկտրոնների բարձր շարժունակության տրանզիստորներ
ICAO	Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն
IEC	Միջազգային էլեկտրո-տեխնիկական



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

	հանձնաժողով
IED	Հանպատրաստից պատրաստված պայթուցիկ սարք
IEEE	Էլեկտրատեխնիկայի և Էլեկտրոնիկայի ճարտարագետների ինստիտուտ
IFOV	ակնթարթային տեսադաշտ
IGBT	Կափույրի մեկուսացված երկբևեռային տրանզիստոր
IGCT	Կափույրի ինտեգրված ուղղորդվող տիրիստոր
ILS	գործիքային վայրէջքի համակարգ
IMU	Իներցիոն չափման հանգույց (սարք)
INS	Իներցիալ նավագնացության համակարգ
IP	Ինտերնետային արձանագրություն
IRIG	Չափագրական գործիքների միջպոլիգոնային վերահսկման խումբ
IRS	Իներցիալ հսկիչ համակարգ
IRU	Իներցիալ հսկիչ սարք
ISA	Միջազգային ստանդարտ մթնոլորտ
ISAR	Շրջադարձային (ինվերսիվ) սինթեզված ապերտուրայով ռադիոլուկացիոն ռադար
ISO	Ստանդարտացման միջազգային



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

	կազմակերպություն
ITU	Հեռահաղորդակցության միջազգային միություն
JT	Զոուլ-Թոմսոն
LIDAR	հեռավորության բացահայտման և չափագրման լազերային համակարգ/լազերային լոկատոր, լիդար
LIDT	Լազերի պատճառած վնասի թույլատրելի շեմը
LOA	Նավի ընդհանուր երկարությունը
LRU	հանգույց, որը կարելի է փոխել շահագործման ընթացքում
MAC	հաղորդագրության իսկությունը հավաստող կոդ» բառերով
Mach	Մախ. առարկայի արագության և ձայնի արագության հարաբերակցությունը (էռնստ Մախի անունով)
MLIS	մոլեկուլային լազերային իզոտոպային անջատում
MLS	վայրէջքի միկրոալիքային համակարգեր
MMIC	Միակտոր միկրոալիքային ինտեգրալային սխեմա
MOCVD	մետաղական օրգանական քիմիական





**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

MOSFET	գազա-փոշեծածկում Մետաղական օքսիդային կիսահաղորդիչ դաշտային տրանզիստոր
MPM	Միկրոալիքային ուժային մոդուլ
MRAM	Մագնիսառեզիստիվ օպերատիվ հիշողություն
MRF	Պատկերի թույլատրելիության առավելագույն չափը
MRI	մագնիսական ռեզոնանսային պատկերում
MTBF	միջին ժամանակը սխալների միջև
Mtops	միլիոն տեսական գործողություն մեկ վայրկյանում
MTTF	մինչև սխալանք աշխատանքի միջին ժամանակը
NA	Թվային ապերտուրա
NBC	Միջուկային, կենսաբանական և քիմիական
NDT	ոչ քայքայիչ փորձարկում
NEQ	Պայթուցիկ նյութի մաքուր քանակությունը
OAM	Գործողություն, վարչարարություն կամ շահագործում
OSI	Բաց համակարգերի փոխադարձ



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

	կապ
PAI	Պոլիամիդային-ամիդներ
PAR	Ճշգրիտ մոտեցման ռադար
PCL	Տեղի բացահայտման պասիվ կոհերենտ (համաձայնեցված) համակարգ
PIN	Անձի ինքնության ճանաչման թիվը
PMR	Մասնավոր շարժական ռադիո
PVD	Ֆիզիկական գազային փոշեծածկում
Ppm	...մաս միլիոնից
PSD	հզորության սպեկտրային խտություն
QAM	կվադրատուրա-ամպլիտուդային- մոդուլյացիա
RAP	Ռեակտիվ ատոմական պլազմաներ
RF	ռադիո հաճախականություն
RNC	Ռադիո ցանցի վերահսկիչ
SACMA	Բարձրակարգ բաղադրյալ նյութերի մատակարարների ասոցիացիա
SAR	սինթետիկ ապերտուրային ռադար
SAS	սինթետիկ ապերտուրային սոնար
SC	միահատիկ բյուրեղ
SCR	Սիլիկոնային վերահսկվող համուղղիչ
SFDR	Խաբուսիկ ազատ դինամիկ դիսպոզիցիոն
S-FIL	Օպտիկական հաջորդականությամբ



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

SHPL	տպագրական լիտոգրաֆիա
SLAR	Գերհզոր լազեր
SMPTE	կողմնորոշիչ օդային ռադար Կինո և հեռուստատեսային ճարտարագետների ասոցիացիա
SOI	Սիլիկոնային մեկուսիչ
SPLD	Պարզ ծրագրավորելի տրամաբանական սարք
SQUID	Գերհաղորդիչ քվանտային ինտերֆերենցիալ սարք
SRA	վերանորոգման արհեստանոցում փոխարինելի հանգույց (սարք)
SRAM	ստատիկ օպերատիվ հիշողություն
SRM	ՍԱԿՄԱ-ի կողմից առաջարկվող մեթոդները
SSB	միաշերտ / միաշերտագիծ
SSR	երկրորդական հետախուզական նադիոլուկատոր
SSS	Կողմնային տեսածրման սոնար
TIR	ընդհանուր հատկորոշված ընթերցում
TVR	Փոխանցվող լարման արձագանք
UPR	Միակողմանի դիրքավորման կրկնվողականություն
UTS	ձգման դեպքում ամրության սահմանը
UV	Ուլտրամանուշակագույն



**Հապավումը կամ  
համառոտագրությունը**

**Բացատրությունը**

VJFET

Ուղղահայաց ծայրակցման դաշտային  
տրանզիստոր

VOR

շատ բարձր հաճախականությամբ  
բազմաուղղությունային ընդգրկույթ

WLAN

Տեղական տարածքի անլար ցանց

YAG

իտրիում / ալյումինային նոնաքար  
(կարկեհան)



**§ 6. «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ»  
ՄԵԽԱՆԻԶՄԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հաշվի առնելով գիտության արագընթաց զարգացումը, ինչպես նաև երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերի անընդհատ փոփոխման և բարելավման անհրաժեշտությունը՝ միջազգային շրջանառության հսկողության համակարգում ձևավորվեց այսպես կոչված «համապարփակ վերահսկողություն» մեխանիզմը, որը ավելի հայտնի է ինչպես «catch all»: Համապարփակ վերահսկողություն գլխավոր նպատակն է կանխել զանգվածային ոչնչացման զեւնքի, դրա փոխադրման միջոցների և ստեղծման տեխնոլոգիաների տարածումն այն դեպքերում, երբ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերի բովանդակությունը և մեխանիզմները բավարար չեն: Ներկայումս ավելի և ավելի շատ են հանդիպում դեպքեր, երբ բարձր տեխնոլոգիական կազմակերպությունները դադարեցնում են նեղ մասնագիտական պրոֆիլավորումը, ձեռք են բերվում հմտություններ, վերապատրաստվում են անձնակազմ, ստեղծվում են ենթակառուցվածքներ, հաղորդակցման համակարգեր, որոնք մինչև որոշակի փուլ դեռևս փաստացի ռազմական ծրագիր չեն և



պաշտոնապես դեռ չեն համընկնում արտահանման ցանկերի հետ: Այլ կերպ ասած, ստեղծվում են նախադրյալների ստեղծելու այնպիսի ապրանքներ կամ հսկվող ոչ նյութական արժեքներ, որոնք չնայած խնդրո առարկա ցանկերում ներառված են, այնուամենայնիվ կարել է համարվել ռիսկային:

«Վերաբերելի օրենսդրությամբ նախատեսված չէ նման մեխանիզմի առկայություն, այնուամենայնիվ, հարկ է անդրադառնալ վերջինիս առանձնահատկություններին:

Համապարփակ վերահսկողության սկզբունքներից ելնելով՝ արտահանողները վերը նշված ցանկերում չներառված ապրանքներ, ոչ նյութական արժեքներ, մտավոր գործունեության արդյուքներ առանց լիազոր մարմնի թույլտվության չեն կարողանում արտահանել, եթե արտահանողը կամ լիազոր մարմինն ունի հիմնավոր կասկածներ առ այն, որ արտահանող ապրանքը կարող է օգտագործվել զանգվածային ոչնչացման զենքի, դրա փոխադրման միջոցների և ստեղծման տեխնոլոգիաների ստեղծման համար: Նման կասկածները կարող են ծագել ինչպես առկա տեղեկատվությունից (օրինակ՝ ի հայտ է եկել բանակցությունների ընթացքում), այնպես էլ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում:

Համապարփակ վերահսկողության սկզբունքի համաձայն՝ արտահանողները, որոնք իրականացնում են ապրանքների և տեխնոլոգիաների փոխանցում արտերկիր, պետք է նախապես վերլուծեն և գնահատեն ապրանքի՝ ոչ ըստ հայտարարագրված նշանակության վերջնական օգտագործման հնարավոր ռիսկե-



րը, ինչպես նաև, նախատեսեն հսկողություն իրականացնելու հնարավորություն, ձեռնարկեն կանխարգելիչ այլ քայլեր՝ արտահանվող ապրանքի (կամ դրա մի մասի) ոչ հայտարարագրված նշանակությամբ կիրառման հնարավորությունը բացառելու համար:

Համապարփակ վերահսկողության սկզբունքը թույլ է տալիս նվազեցնել այսպես կոչված "սահմանային" ապրանքների անցանկալի տարածման և օգտագործման ռիսկերը, որոնք կապված են վերջնական օգտագործողի և վերջնական օգտագործման նպատակների հետ:

Բացի վերը նշված «կարմիր դրոշներից», արտաքին տնտեսական գործունեության մասնակիցը համապարփակ վերահիշակողության համատեքստում կարող է օգտագործել ստորև ներկայացված չափանիշները գործարքի հուսալիությունը գնահատելու համար: Մասնավորապես, խորհուրդ է տրվում իրականացնել համապարփակ վերլուծություն ինչպես գործարքի կողմերի և արտահանվող ապրանքի վերաբերյալ, այնպես էլ լոգիստիկ լուծումների (օրինակ՝ բեռնափոխադրումը կազմված է անտրամաբանական և ֆինանսապես չարդարացված կերպով, փաստաթղթերը կազմված են սխալներով և/կամ այլ ձևաչափով) և ֆինանսական գործարքների մասով (օրինակ՝ պայմանագրի և հաշիվ ապրանքագրերի միջև առկա են տարբերություններ, ֆինանսական փոխանցումներն իրականացվում են ոչ ստանդարտ ճանապարհով, այլ ընկերությունների անուններից):



## **§ 7. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հսկվող ապրանքերի և ոչ նյութական արժեքների արտահանման-ներմուծման գործառնություններ իրականացնող բոլոր կազմակերպություններին անհրաժեշտ է մշակել խնդրո առարկա ոլորտի պատասխանատու աշխատողների գործողությունները կանոնակարգող ընթացակարգ, որը մանրամասն նկարագրում է արտահանման օրենսդրության խախտումները կանխելուն ուղղված գործողությունների հաջողականությունը:

Նշված ընթացակարգը համապատասխանության ներկայգմակերպական ծրագրի բաղկացուցիչ մասերից մեկն է և ներառում է հետևյալ գործողությունների մանրամասն նկարագրությունը՝

1. Օտարերկրյա գործընկերոջից ապրանքների մատակարարման առևտրային առաջարկ ստանալուց հետո դրա պատճենը փոխանցվում է արտահանման վերահսկում իրականացնող ստորաբաժանմանը կամ աշխատողին՝ առաջարկվող գործարքը արտահանման հսկողման օրենսդրական պահանջներին համապատասխանության տեսանկյունից ստուգում իրականացնելու նպատակով:
2. Նույն ստորաբաժանումը կամ աշխատողը, համապատասխան հետազոտություն իրականացնելուց հետո հնա-





րավորինս շատ տեղեկատվություն է հավաքում արտահանվող ապրանքի մասին: Այդ նպատակների համար տեխնիկական ստորաբաժանումների ներկայացուցիչներից պահանջվում է տվյալ ապրանքի, գծագրերի, ձևաթղթերի և այլնի մասին տեղեկություն: Այնուհետև որոշվում է ապրանքի դասակարգումը և, եթե այն դասակարգվում է որպես հսկվող ապրանք, ապա նախապատրաստվում է անհրաժեշտ փաստաթղթերի և թույլտվությունների ցանկը:

3. Տեղեկություններ են հավաքվում օտարերկրյա ընկերության մասին, որից ստացվել է առևտրային առաջարկը: Այդ նպատակների համար օգտագործվում են տեղեկատվության բոլոր հնարավոր աղբյուրները, ներառյալ ինտերնետը և այլ կազմակերպությունների ակնարկները, որոնք արդեն համագործակցել են այս հաճախորդի հետ:

4. Իրականացվում է հսկվող ապրանքի կամ ոչ նյութական արժեքի դասակարգում, մասնավորապես՝

- ԱՏԳ կոդը որոշում
- ըստ ցանկերի ստուգում
- եթե ապրանքները չեն պատկանում և չեն դասվում ցանկերին, ապա ստուգվում է դրանք «համապարփակ վերահսկողության» տակ գտնվող ապրանքներ դասակարգելու հնարավորությունը:

5. Որոշվում է լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկատվության ձեռքբերման անհրաժեշտությունը (արտահանու-



ղից/ներմուծողից հավաստիացումներ, ապրանքների տեխնիկական բնութագրեր, երկրի լիազոր մարմնի երաշխիքներ և այլն):

6. Որոշվում է փորձաքննության անհրաժեշտությունը և ըստ դրա՝ իրականացվում է փորձաքննություն:

7. Վերլուծվում են վերջնական օգտագործողի հետ կապված հավանական ռիսկերը ստացված և հասանելի տեղեկատվության հիման վրա:

8. Իրականացվում է փաստաթղթերի վերջնական ստուգում (պայմանագրի կնքում, թույլտվության ստացում, այլ օժանդակ փաստաթղթերի ստացում):

9. Բոլոր ստուգումների ավարտից և անհրաժեշտ բոլոր թույլտվությունները ստանալուց հետո իրականացվում է ապրանքի արտահանում՝ համապատասխան մաքսային ձևակերպումներով:

Այլ կերպ ասած, պատշաճ կերպով արտահանում իրականացնելու համար անհրաժեշտ է նույնականացնել արտահանվող ապրանքը, դասակարգել այն, անհրաժեշտության դեպքում դիմել մասնագիտացված փորձագիտական կազմակերպությանը, կատարել վերջնական օգտագործողի վերլուծություն և այնուհետև իրականացնել արտահանում:



## **Հսկվող ապրանքների եվ հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության առանձնահատկությունները**

Ապրանքների և ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննությունն արտահանման վերահսկման կարևոր տարրն է, որի հիմնական խնդիրն է պարզել ապրանքի կամ տեխնոլոգիայի պատկանելությունը երկակի նշանակության ապրանքներին և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքներին:

Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ Կառավարությունը 2004 թվականի մայիսի 20-ին թիվ 765-Ն որոշմամբ սահմանել է հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգը: Հարկ է նշել, որ փորձաքննություն իրականացնելիս նշված կարգով սահմանված պահանջները՝ կապված քրեական վարույթի, վարչական իրավախախտումների հետ, ինչպես նաև մաքսային կանոնների խախտմանն առնչվող



գործերի, կիրառվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ և մաքսային օրենսդրության նորմերին:

Համաձայն վերը նշված որոշման, համաձայն հիմնական խնդիրները փորձաքննության ներկայացվող ապրանքների կամ տեխնոլոգիաների՝ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների խմբին պատկանելությունը պարզելն է: Այդ նպատակով սահմանվում են՝

ա) ապրանքների կամ տեխնոլոգիաների ընդունված առևտրային (տեխնիկական) անվանումը, հատուկ նշանները և չափանիշները, որոնք փաստում են նրա պատկանելությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերում (այսուհետ՝ ցանկեր) ընդգրկված ապրանքների, նյութերի, արտադրատեսակների համասեռ խմբերին,

բ) գիտության և տեխնիկայի այն ոլորտները, որտեղ կիրառվում են կամ կարող են կիրառվել այդ ապրանքներն ու տեխնոլոգիաները, այդ թվում՝ դրանց օգտագործման հնարավորությունը զանգվածային ոչնչացման զենքի և դրանց փոխադրման միջոցների ստեղծման ժամանակ,

գ) ապրանքների կամ տեխնոլոգիաների համապատասխանությունը ներկայացված բնութագրերին և տեխնիկական



նկարագրությանը,

դ) ապրանքների կամ տեխնոլոգիաների ֆիզիկական և քիմիական բաղադրությունը, դրանց բաղադրության մեջ մտնող բաղադրիչների քանակական հարաբերակցությունը, ապրանքանիշը, տեսակը, տիպը, մոդելը,

ե) ցանկերի համարները, ինչպես նաև արտահանման վերահսկողության ոլորտին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերը, որոնց գործողությունը տարածվում է հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների վրա:

Հարկ է նշել, որ փորձաքննության արդյունքներն օգտագործվում են արտահանող սուբյեկտների կողմից արտահանման թույլտվություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետաքննության, նախաքննության, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթ իրականացնող կամ վերահսկվող մարմինների կողմից իրենց իրավասության հարցերի լուծման համար:

Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկին որևէ ապրանքի պատկանելության վերաբերյալ փորձաքննությունն իրականացվում է հավատարմագրված փորձագիտական կազմակերպությունների կողմից:

Արտահանման վերահսկման համար փորձաքննությունն անցկացվում է երկու հիմքով՝

- հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեք-



ներ արտահանող սուբյեկտների պատվերով

- քրեական հետապնդման մարմինների, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթ իրականացնող կամ վերահսկող մարմինների հարցումների հիման վրա:

Հարկ է նշել, որ փորձաքննությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով վերը նշված պատվիրատուի տեխնիկական առաջադրանքին (հարցմանը) համապատասխան, որտեղ նշվում են՝

ա) փորձաքննության պատվիրատուի մասին տեղեկություններ (իրավաբանական անձանց համար՝ նրանց լրիվ անվանումը, գտնվելու վայրն ու գործունեության իրականացման վայրը, ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրային տվյալները և բնակության վայրը),

բ) փորձագիտական կազմակերպության անվանումը,

գ) փորձաքննության հիմքերը (դրա անցկացման անհրաժեշտության հանգամանքները),

դ) փորձաքննության ընթացքում լուծում պահանջող հարցերը,

ե) փորձաքննության անցկացման ժամկետները,

զ) փորձագիտական կազմակերպությանը տրամադրված նյութերը, այդ թվում՝ փորձանմուշները (ամբողջ օբյեկտին՝ իր բաղադրությամբ ու հատկություններով նույնական ապրանքի օպտիմալ մասնիկը) և ապրանքանմուշները (ապրանքի ամբողջ



սերիային՝ իր կառուցվածքով, բաղադրությամբ ու հատկություններով նույնական ապրանքի միավորը), ինչպես նաև ապրանքների կամ տեխնոլոգիաների մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը՝ տեխնիկական նկարագիրը, պետական ոչ ճյուղային ստանդարտները, տեխնիկական պայմանները, կոնստրուկտորական, տեխնոլոգիական և շահագործման փաստաթղթերը, լուսանկարները, տեխնիկական անձնագրերը, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում անցկացված փորձարկումների արդյունքներին վերաբերող փաստաթղթերը:

Առանձնակի կարևորություն ունեն փորձաքննության անցկացման ժամկետները,,: Վերջիններիս սահմանվում են փորձագիտական կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով փորձաքննության պատվիրատուի հետ՝ ելնելով նախատեսվող աշխատանքների աշխատատարությունից և հետազոտման ներկայացված նյութերի ծավալից, սակայն չեն կարող գերազանցել 10 աշխատանքային օրը:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը սահմանել է փորձաքննության վճար, որը ապրանքների յուրաքանչյուր կատեգորիայի համար չի կարող գերազանցել 60,000 դրամը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Սույն կարգավորումը խնդրահարույց է, քանի որ փորձագիտական կազմակերպությունները հիմնականում ստիպված են կատարել ներդրումներ կազմակերպության մասնագիտական անձնակազմի վերա-



պատրաստման, ինչպես նաև համապատասխան գործիքակազմի ձեռքերման համար: Նման ծախսերը միշտ չէ, որ արդարանում են, և կազմակերպությունը ստիպված դադարեցնում է իր գործունեությունը:

Փորձաքննության իրականացման համար կարևոր է նաև փորձագիտական կազմակերպությանը ուղարկվող ապրանքների նմուշների ու փորձանմուշների պատշաճ փաթեթավորումը: Բացի դրանից, վերջիններս կնքվում և համարակալվում են, իսկ ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում է փորձաքննության պատվիրատուի ստորագրությամբ և կնիքով, եթե պատվիրատուն կնիք ունի: Հարկ է նշել, որ կնիքի առկայությունը չի հանդիսանում պարտադիր պայման, ուստի և ստորագրության առկայությունը դիտվում է որպես բավարար հիմք:

Այս համատեքստում կարևոր է նշել, որ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ կապված փորձաքննությունն անցկացվում է պետական կառավարման այն մարմնի թույլտվությամբ, որի ենթակայության ներքո են գտնվում նշված տեղեկությունները, և միայն այն փորձագիտական կազմակերպություններում, որոնք ունեն այդպիսի տեղեկությունների հետ աշխատելու համապատասխան թույլտվություն՝ ՀՀ վերաբերելի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, փորձաքննության անցկացման նպատակով փորձագիտական կազմակերպություն ներկայացված պատշաճ





կերպով համարակալված և փաթեթավորված նյութեր, որոնք փորձագիտական կազմակերպությունում ենթակա են գրանցման: Այնուհետև, ստացված նյութերը փոխանցվում են գիտության և տեխնիկայի համապատասխան ոլորտների անհրաժեշտ գիտելիքներին տիրապետող փորձագետներին: Վերջիններիս ընտրությունը, նրանց կազմի հաստատումը և գործունեության կարգն իրականացվում են փորձագիտական կազմակերպության ղեկավարի կողմից:

Հարկ է նշել, որ բարդ փորձաքննության համար առանձին ոլորտների գծով կարող են կազմվել փորձագետների խմբեր՝ փորձագիտական կազմակերպության հաստիքային աշխատողներ չհամարվող գիտնականներից ու մասնագետներից՝ պայմանագրային հիմունքներով: Փորձագիտական կազմակերպության արտահաստիքային աշխատողներն իրենց փորձագիտական գործունեությունն իրականացնում են սույն կարգին համապատասխան:

Վերը շարադրվածի համատեքստում կարևոր է առանձնացնել փորձագիտական կազմակերպության ղեկավարի դերը և լիազորությունները: Մասնավորապես, փորձագիտական կազմակերպության ղեկավարը պատասխանատու է հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների արտահանման գործունեությունը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նորմատիվատեխնիկական և հրահանգամեթոդական փաստաթղթերի պահանջների պահ-



պանման համար: Ի կատարում նշվածի, վերջինս

ա) փորձաքննություն անցկացնելու նպատակով ստանում է փորձագիտական կազմակերպություն ներկայացված փաստաթղթերն ու նյութերը,

բ) հաստատում է փորձաքննությունների անցկացման ժամանակացույցը և դրա կատարման վերաբերյալ մեկ կամ մի քանի փորձագետների տալիս է հանձնարարական (գրավոր),

գ) փորձագետներին պարզաբանում է իրենց իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնում եզրակացություն տալուց խուսափելու կամ հրաժարվելու, կամ դիտավորյալ կեղծ եզրակացություն տալու դեպքում նրանց՝ օրենքով նախատեսված պատասխանատվության մասին,

դ) ապահովում է լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը փորձագետներին,

ե) ծանոթանում է փորձագետների կողմից անցկացվող հետազոտությունների արդյունքներին և ընթացքին՝ ցույց տալով գիտատեխնիկական ու մեթոդական բնույթի անհրաժեշտ օգնություն,

զ) ձեռնարկում է միջոցներ՝ փորձաքննության ներկայացված տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու համար,

է) փորձաքննության ավարտից հետո ստուգում է անցկացված հետազոտությունների ամբողջականությունը, փորձագետների կողմից կազմված եզրակացությունների հիմնավորվածությունը և ճշտությունը,



ը) փորձաքննության մասին եզրակացությունը բոլոր նյութերի հետ միասին ուղարկում է փորձաքննության պատվիրատուին:

Բնականաբար, պակաս կարևոր չեն նաև փորձաքննություն իրականացնող փորձագետի լիազորությունները: Մասնավորապես՝ փորձագետի իրավունքներն ու պարտականություններն են՝

ա) անհրաժեշտ հետազոտությունների, չափումների ու վերլուծությունների կատարումը,

բ) փորձագիտական կազմակերպություն ներկայացված ապրանքներին կամ տեխնոլոգիաներին առնչվող նյութերին ծանոթանալը,

գ) փորձագիտական կազմակերպության ղեկավարին դիմելը՝ փորձաքննության պատվիրատուից ապրանքների և տեխնոլոգիաների բազմակողմ ու օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ լրացուցիչ նյութեր պահանջելու համար,

դ) փորձագիտական կազմակերպության ղեկավարին եզրակացության կազմման անհնարիության մասին հայտնելը այն դեպքում, երբ լուծում պահանջող հարցերի շրջանակը նրա մասնագիտական գիտելիքների սահմաններից դուրս է,

ե) հատուկ կարծիք հայտնելը, որը կցվում է փորձաքննության եզրակացությանը,

զ) փորձաքննության ներկայացված ապրանքների, նմուշների, փորձանմուշների, փաստաթղթերի և այլ նյութերի հետա-



զոտության և բազմակողմանի ու օբյեկտիվ վերլուծության կատարումը, եթե դրանք հնարավորություն են ընձեռում, առանց լրացուցիչ տվյալների ստացման, լուծելու բարձրացված հարցերի մի մասը՝ եզրակացության մեջ նշելով այն պատճառները, որոնք անհնարին են դարձնում մնացած հարցերի լուծումը,

է) իր կողմից տրված եզրակացության արդյունքների օբյեկտիվությունն ու հիմնավորվածությունն ապահովելը,

ը) փորձաքննությունների անցկացման սահմանված կարգն ու ժամկետները պահպանելը,

թ) փորձաքննության պատվիրատուի ներկայացրած նյութերի պահպանությունն ու գաղտնիությունն ապահովելը,

ժ) անհրաժեշտության դեպքում իր տված եզրակացության և կատարած գործողությունների վերաբերյալ բացատրություններ տալը:

Համապատասխան հետազոտություններ իրականացնելուց, փորձաքննության անցկացման ավարտից հետո փորձագետները կազմում են գրավոր եզրակացություն, որտեղ պետք է նշվեն համապատասխան եզրակացությունները, ինչպես նաև առաջդրված հարցման պատասխանը:

Փորձագետը եզրակացությունը ներկայացնում է իր անունից՝ իր մասնագիտական գիտելիքներին համապատասխան կատարված հետազոտությունների հիման վրա, և իր տված եզրակացության համար կրում է համապատասխան պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով: Այս համա-



տեքստում կարևոր է նշել նաև, որ փորձագիտական կազմակերպության ապօրինի գործողությունների պատճառով կամ այդ կազմակերպության կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով փորձաքննության պատվիրատուին պատճառված վնասը ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով:

Օրենսդիրը սահմանում է փորձագիտական եզրակացության գլխավոր չափորոշիչները՝ օբյեկտիվ, փաստարկված և բաղկացած լինի 3 մասից՝ ներաժական մաս, հետազոտական (նկարագրական) մաս և եզրակացություններ: Այս առումով կարծում ենք, որ ավելի նպատակահարմար է կիրառել «հիմնավորված», քանի որ փորձագետի եզրակացությունը, ըստ էության դրվում է լիազոր մարմնի կողմից տրված որոշման հիմքում և միայն փաստարկված եզրակացությունը կարող է բավարար չլինել:

ՀՀ Կառավարությունը 2004 թվականի մայիսի 20-ին թիվ 765-Ն որոշմամբ եզրակացության ներաժական մասում նշվում են՝

ա) փորձաքննության պատվիրատուի մասին տեղեկությունները,

բ) փորձաքննության բնութագրությունը (առաջին, լրացուցիչ կամ կրկնակի),

գ) փորձագիտական կազմակերպության անվանումը,

դ) փորձագետի (փորձագետների) մասին տեղեկություններ:



րը՝ ազգանունը, անունը, հայրանունը, կրթությունը, մասնագիտությունը, գիտական աստիճանն ու գիտական կոչումը և զբաղեցրած պաշտոնը,

ե) փորձաքննության անցկացման նպատակով փորձագիտական կազմակերպություն նյութերը ներկայացնելու և եզրակացությունը կազմելու ամսաթվերը, տարեթվերը,

զ) փորձաքննության անցկացման հիմքերը,

է) փորձաքննության ներկայացված նյութերի և այլ հետազոտման օբյեկտների անվանումները, փորձագիտական կազմակերպության, դրանց փոխադրման միջոցները և փաթեթավորման ձևերը, հետազոտման ենթակա օբյեկտների պահպանությունն ու դրանց մասին տվյալները,

ը) փորձագետի կողմից տրված՝ լրացուցիչ նյութեր ներկայացնելու վերաբերյալ միջնորդությունները և դրանց հետազոտման արդյունքները:

Հետազոտական մասում նշվում են՝

ա) փորձաքննության ներկայացված օբյեկտների վիճակը,

բ) հետազոտությունների անցկացման եղանակներն ու մեթոդները և օգտագործված նյութերը,

գ) կատարված զննումների, չափումների, անալիզների ու հաշվարկների արդյունքները,

դ) հավելվածներին հղումները և դրանց վերաբերյալ անհրաժեշտ բացատրությունները,

ե) հետազոտությունների արդյունքների փորձագիտական



գնահատականը:

Եթե փորձագետին տրված հարցերից մի մասին հնարավոր չէ սպառիչ պատասխան տալ, ապա հետազոտական մասում նշվում են դրա պատճառները, և տրվում են համապատասխան խորհուրդներ փորձաքննությունն այլ մասնագետների կողմից անցկացվելու վերաբերյալ:

Փորձագետի (փորձագետների) եզրակացությունները շարադրվում են հարցերին տրված պատասխանների տեսքով, այն հաջորդականությամբ, որով դրանք ներկայացվում են եզրակացության ներածական մասում:

Եզրակացությունները շարադրվում են վերջում և միանշանակ սահմանում են ապրանքների կամ տեխնոլոգիաների պատկանելությունը (չպատկանելը) արտահանման վերահսկման ենթակա արտադրատեսակներին, պարունակում են բարձրացված հարցերի պատասխանները, ինչպես նաև՝ նշումներ այս կամ այն պատճառով դրանց լուծման անհնարինության մասին: Այլ կերպ ասած, եզրակացությունները պետք է շարադրվեն հստակ և միանշանակ: Չի թույլատրվում երկիմաստ մեկնաբանություններ տալը:

Տարբեր ոլորտներում մասնագիտացած մի քանի փորձագետների կողմից փորձաքննության անցկացման դեպքում ընդհանուր եզրակացություններն ստորագրվում են հետազոտություններին միասնական գնահատական տված և ընդհանուր կարծիք ունեցող փորձագետների կողմից: Եթե փորձագետ-



ներն ընդհանուր կարծիքի չեն հանգում, ապա ընդհանուր եզրակացության մեջ ձևակերպում են ինքնուրույն եզրակացություններ: Այդ դեպքում յուրաքանչյուր փորձագետ հիմնավորում է այլ փորձագետների հետ չհամաձայնելու պատճառները: Ինքնուրույն եզրակացությունների ձևակերպման դեպքում փորձագետները կարող են հաշվի առնել (օգտվել) այլ փորձագետների կողմից ստացված արդյունքները՝ դրա մասին նշելով իրենց եզրակացությունների հիմնավորումներում: Եզրակացությունն ստորագրվում (հաստատվում) է փորձագիտական կազմակերպության ղեկավարի կողմից և վավերացվում կազմակերպության կնիքով:

Բնականաբար, հնարավոր են իրավիճակներ, երբ անհնար է կատարել հետազոտություն, այդ դեպքում կազմվում է եզրակացության կազմման անհնարինության մասին գրություն, որը նույնպես բաղկացած է 3 մասից՝ ներածական, պատճառաբանական և եզրափակիչ: Ինչպես և փորձագետի եզրակացությունը, խնդրո առարկա գրությունը նույնպես ենթակա է ստորագրման փորձագիտական կազմակերպության ղեկավարի կողմից և վավերացման կազմակերպության կնիքով:

Փորձագիտական կազմակերպությունը հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկին ապրանքի կամ արժեքի պատկանելության վերաբերյալ եզրակացությունը կամ այն տրամադրելու վերաբերյալ անհնարինության մասին որոշումը հանձնում է պատվիրատուին, իսկ պատճենը տրա-





մադրում է լիազոր մարմնին: Եթե փորձաքննությունն իրականացվել է հետաքննության, նախաքննության կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթ իրականացնող կամ հսկող մարմնի (պաշտոնատար անձի) հարցման հիման վրա, ապա եզրակացությունը տրվում է վերջինիս:

### **Վերջնական օգտագործողի հետ կապված ռիսկերի գնահատում**

Վերջնական օգտագործողի հուսալիության պաշտոնական փաստաթղթային ստուգումը արտահանման վերահսկման գործընթացի կարևոր տարր է, որի նպատակն է գնահատել արտաքին տնտեսական գործարքում ներգրավված կողմերի հուսալիությունը և խուսափել հնարավոր ռիսկերից: Այլ կերձ ասած, ստուգման հիմնական նպատակը հսկվող ապրանքների արտահանման դեպքում օգտագործման հետ կապված հնարավոր ռիսկերի բացահայտումն է: Սա թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել կասկածելի պատվերները և կանխել մասնակցությունը կասկածելի գործարքներին, ինչը, իր հերթին, կանխում է պատժամիջոցների կիրառումը, տնտեսական վնասը և բացասական ազդեցությունը արտահանողի հեղինակության և գործարար համբավի վրա:

«Օրենսդրության համաձայն՝ վերջնական օգտագործողը



օտարերկրյա պետության, օտարերկրյա պետության իրավաբանական և ֆիզիկական անձն է, որը Հայաստանի Հանրապետությունից արտահանվող կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող հսկվող ապրանքի, ինչպես նաև հսկվող ոչ նյութական արժեքների իրական օգտագործողն է: Այս համատեքստում կարևոր է վերջնական օգտագործողի հստակ բնորոշումը, քանի որ արտահանման գործընթացի, ինչպես նաև պայմանագրի մաս կարող է կազմվել լոգիստիկ և միջնորդական<sup>13</sup> ընկերությունները:

«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված է նաև «վերջնական օգտագործում» եզրույթի հասկացությունը, այն է՝ վերջնական օգտա-

---

<sup>13</sup> "Միջնորդությունը" արտահանման վերհսկման ոլորտում տեղի է ունենում այն ժամանակ, երբ անհատը կամ ընկերությունը, որպես գործակալ կամ միջնորդ, կազմակերպում է հսկվող ապրանքների, ծրագրակազմի կամ տեխնոլոգիաների մատակարարումը հիմնական երկրից (այս դեպքում՝ ՀՀ-ի մաքսային սահմաններից) դուրս գտնվող երկու կետերի միջև և օգուտ է քաղում միջնորդական ծառայությունների մատուցումից: «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքով միջնորդական ծառայություններ նախատեսված չեն:



գործողի կողմից հսկվող ապրանքի և հսկվող ոչ նյութական արժեքների կիրառում՝ հայտարարագրված նպատակին համապատասխան:

Ստուգումն առավել նպատակահարմար է իրականացնել պատվերը ստանալուց անմիջապես հետո, ինչպես նաև պատվերի և/կամ վերջնական օգտագործողների մասին նոր տեղեկատվության ի հայտ գալու դեպքում:

Վերջնական օգտագործողի գնահատումն իրականացվում է մի շարք չափանիշներով, ինչպիսիք են պետության մասնակցությունը միջազգային ռեժիմների (օրինակ՝ Վասենաարի պայմանավորվածություններ, Յվանգերի կոմիտե և Ավստրալական խումբ), պետության մասնակցությունը արտահանման վերահսկման համաձայնագրերին, միջկառավարական համաձայնագրերի առկայությունը, վերջնական օգտագործողի իրավական կարգավիճակը, դուստր ձեռնարկությունների արտերկրում ընկերության գործարար համբավը, գործունեության հիմնական ուղղությունները, կապը ռազմական (միջուկային, քիմիական և այլ, կենսաբանական) գործունեության ոլորտներին և այլն:

Վերջնական օգտագործողի գնահատման համատեքստում կարևոր դեր ունի նաև վերջնական օգտագործողի հավաստագիրը, որը անհրաժեշտ է թույլտվություն ստանալու համար: Վերջնական օգտագործողի հավաստագիրը հսկվող ապրանքներ և (կամ) հսկվող ոչ նյութական արժեքներ ստացող պետութ-



յան կամ այդ պետության անձի (իրավաբանական կամ ֆիզիկական) անվանման, դրա գտնվելու և գործունեության վայրի մասին, արտահանվող հսկվող ապրանքների կամ փոխանցվող հսկվող ոչ նյութական արժեքների նկարագրի մասին, այդ ապրանքների, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքների վերջնական օգտագործման նպատակի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթն է: Վերջինս նաև հավաստում է, որ նշված ապրանքները և (կամ) տեղեկատվությունը չեն փոխանցվի որևէ երրորդ երկիր կամ անձի կամ չեն օգտագործվի հայտարարագրված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի պետական կառավարման մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված համաձայնության: Վերջնական օգտագործողի հավաստագիրը ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում հաստատում է վերջնական օգտագործողի երկրի իրավասու պետական կառավարման մարմինը: Վերջնական օգտագործողի հավաստագիրը ներմուծող երկրում ներմուծման հավաստագրի տրամադրման ընթացակարգի բացակայության դեպքում զանգվածային ոչնչացման զենքի չտարածման վերաբերյալ վերջնական օգտագործողի պարտավորությունները հաստատվում են վերջնական օգտագործման երկրի պաշտոնական լիազորված պետական մարմնի կողմից տրամադրված նամակի կամ ստորագրությամբ և կնիքով այլ փաստաթղթի տեսքով:



Հարկ է նշել, որ արտահանման գործընթացում կանոր է նաև պայմանագրերի կազմումը և վերաբերելի մաքսային օրենսդրությամբ սահմանված ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ցանկացած ապրանքի, այդ թվում հսկվող, արտահանման գործընթացում կարևոր է հստակ քայլերի հերթականություն, ռիսկերի գնահատումը, պայմանագրի և անհրաժեշտ թույլտվությունների առկայությունը, իսկ քայլերի հերթականությունը հիմնականում նկարագրվում է համապատասխանության ներկազմակերպական ծրագրի, որի մասին կխոսենք ստորև:



## **§ 8. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Ինչպես արդեն նշվեց, արտահանման վերահսկումն իրենից ներկայացնում է երեք տարբեր կառուցվածքային և իրավական մակարդակներում գործող համակարգ՝ միջազգային, ազգային և ներկազմակերպական: Եթե միջազգային մակարդակում գործող արտահանման վերահսկման համակարգը ձևավորվում և զարգանում է՝ հիմնվելով բացառապես միջազգային արտահանման ռեժիմների կարգավորումների և լավագույն փորձի վրա, ապա ազգային վերահսկման մեխանիզմները հիմնվում են միջազգային կարգավորումների իմպլեմենտացիայի, ներպետական օրենսդրության կարգավորումների և միջազգային իրավունքի գերակայության հայեցակարգի վրա: Այլ կերպ ասած, ազգային օրենսդրությունը չի կարող ավելի մեղմ լինել, քան միջազգային համապատասխան կարգավորումները:

Իր հերթին, ազգային օրենսդրությունը ավելի մանրամասն է կարգավորում արտահանման վերահսկման գործընթացները՝ նպատակ ունենալով ստեղծել ամուր հիմքեր ներպետական գործընթացների զարգացման համար: Միևնույն ժամանակ, այն չի կարող հակասել միջազգային իրավական ակտերին:

Սահմանված կարգավորումները տարածվում են արտահանող սուբյեկտների վրա, որոնք կոչված են խստով հետևելու ներպետական օրենսդրության և միջազգային պայմանագրե-



րին: Այլ կերպ ասած, արտահանման վերհսկումը գործնականում կարևորվում է բոլոր մակարդակներում, ուստի ներկազմակերպական վերհսկման մեխանիզմները պակաս կարևոր չեն կարող լինել:

Վերջին տարիներին ՀՀ-ում մեծ թափով ավելանում են արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող ընկերությունները: Վերջիններիս կազմում գործում են համապատասխան ստորաբաժումներ, որոնք զբաղվում են միջազգային պայմանագրերի կնքմամբ և մաքսային ձևակերպումների կարգավորմամբ: Այնուամենայնիվ, հաճախ լինում են իրավիճակներ, երբ, չնայած այդ գերատեսչությունների աշխատակիցների բարձր որակավորմանը, ընկերությունները բախվում են արտահանման հետ կապված մի շարք դժվարությունների: Հաճախ պատահում է, որ խնդիրները բացահայտվում են միայն այն բանից հետո, երբ զգալի աշխատանք է կատարվել առևտրային գործարք կնքելու և կանխավճար կատարելու ուղղությամբ: Դժվարություններ կարող են առաջանալ մաքսային մարմինների կամ բրոքերների հետ փոխգործակցության փուլում: Այլ կերպ ասած, արտահանման գործընթացի յուրաքննաչյուր փուլում կարող են ի հայտ գալ հսկվող ապրանքներ և/կամ տեխնոլոգիաներ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխել ինչպես արդեն կնքված պայմանագրերը, այնպես էլ վերանայել մատակարարման ժամկետները և պայմանները, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական չնախատեսված ծախսերի կամ, առհասարակ, գործարքի չեղարկման: Նման իրավիճակ-



ները բացառելու համար միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներն իրականացնելու համար ընկերություններին անհրաժեշտ է ունենալ համապատասխանության ներկազմակերպական ծրագիր:

Միջազգային տերմինաբանության մեջ համապատասխանության ներկազմակերպական ծրագիրն անվանում են ICP (Internal Compliance Program), որի հիմնական իմաստը արտահայտվում է հենց «համապատասխանություն» բառով: Ընդհանրապես, «համապատասխանությունը» շրջանառության հսկողության ամենակարևոր տարրերից մեկն է, քանի որ սահմանում է քայլերի հստակ հաջորդականություն, որոնք ապահովելու են արտահանող սուբյեկտների գործունեության համապատասխանությունը գործող կարգավորումներին:

Համապատասխանության ներկազմակերպական ծրագրի ստեղծման հիմնական նպատակը արտահանման գործարքների օրինականության երաշխիքների ստուգման և երաշխավորման մեխանիզմի ստեղծումն է, որոնք կոչված են հեշտացնել կազմակերպությունների արտաքին տնտեսական գործունեության առավել արդյունավետ կառավարումը, հեշտացնել արտահանման թույլտվությունների ստացման հետ կապված ընթացակարգերի իրականացումը, ինչպես նաև կանխել անօրինա-





կան գործողությունների իրականացումը և նվազեցնել ռիսկերը:

«Օրենսդրության համաձայն՝ համապատասխանության ներկազմակերպական ծրագիրն իրենից ներկայացնում է կազմակերպչական, վարչական, տեղեկատվական և այլ բնույթի միջոցառումների ամբողջություն, որն իրականացնում են արտահանող սուբյեկտները շրջանառության հսկողության կանոնները պահպանելու նպատակով:

Համապատասխանության ներկազմակերպական ծրագրի վերը նշված սահմանման մեջ նշված կազմակերպչական, վարչական և տեղեկատվական բնույթի միջոցառումներն ունեն հետևյալ բովանդակությունը.

- կազմակերպչական բնույթի միջոցառումները ներառում են կազմակերպության արտահանման հսկողության համակարգի կազմակերպչական կառուցվածքի ստեղծում, լիազորված անձի նշանակում, աշխատակիցների հրահանգում, ստանդարտների, հրահանգների և ընթացակարգերի ստեղծում (օրինակ՝ վերջնական օգտագործման, վերջնական օգտագործողների ստուգում, գործարքների վերլուծություն, թույլտվության ստացման կարգ, լոգիստիկ ծառայություն մատուցող ընկերության ստուգում և այլն)

- վարչական բնույթի միջոցառումները ենթադրում են սահմանված ընթացակարգերի խախտման համար պատասխանատվության նախատեսում (օրինակ՝ ներքին ստուգումներ (աուդիտ) արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս կազմակերպության գործունեության կարգը խախ-



տելու համար տույժեր սահմանելը, գործող համակարգի ռիսկերի վերլուծություն և դրանց նվազեցում):

- տեղեկատվական բնույթի միջոցառումները ենթադրում են կազմակերպության աշխատակիցների իրազեկվածության բարձրացում (օրինակ՝ դասընթացներ և վերապատրաստումներ, պետական մարմինների հետ համագործակցությանն ուղղված քայլեր, իրավական կարգավորումներ և այլն):

Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հսկվող ապրանքների արտահանում և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների մոտ շրջանառության հսկողությանը վերաբերող օրենսդրության պահանջներին՝ իրենց գործունեության համապատասխանությունն ապահովվում է սուբյեկտների ներդրած համապատասխանության ներկազմակերպական ծրագրի միջոցով:

Չնայած որ հոդվածը կրում է իմպերատիվ բնույթ, այնուամենայնիվ գործնականում այն չի իրականացվում: Պատճառն այն է, որ գործնականում համապատասխանության ներկազմակերպական ծրագիրը, չնայած ռիսկերի ակնհայտ նվազեցմանը, այնուամենայնիվ դիտվում է որպես «լրացուցիչ փաստաթղթաբանություն», քանի որ դրա առկայությունը կամ բացակայությունը չի հանգեցնում որևէ պատասխանատվության:



Կարծում ենք, եթե թույլտվության տրամադրման համար վերը նշված ծրագրի առկայությունը պարտադիր լիներ, հնարավոր է վերջինիս բացակայության հարցը այլ լուծում կստանար:

Վերը նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համապատասխանության ներկազմակերպական ծրագրի կազմակերպման եղանակների և դրա գործածության հետ կապված հարցերով լիազոր մարմինը յուրաքանչյուր արտահանող սուբյեկտին ցուցաբերում է տեղեկատվական-մեթոդական աջակցություն:

2014 թվականին լրատվական կայքերից մեկի<sup>14</sup> տեղեկության համաձայն՝ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման ընթացակարգերի բարելավման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների շրջանառություն իրականացնող սուբյեկտների մոտ համապատասխանության ներկազմակերպական ծրագրի ներդրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը»: Սակայն մինչ օրս չկա որևէ նորմատիվ իրավական ակտ, որ սահմաներ համապատասխանության ներկազմակերպական ծրագրի ձևաչափը կամ բաղկացուցիչ տարրերը:

---

<sup>14</sup> <https://armlur.am/285118/>



## **§ 9. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի՝ շրջանառության հսկողության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվում է շրջանառության հսկողության պետական կառավարման լիազոր մարմնի միջոցով (այսուհետ՝ լիազոր մարմին), որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի թիվ 924-Ն որոշմամբ երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը: Վերը նշված օրենքով ստանձնած պարտավորությունների պատշաճ իրականացման նպատակով շրջանառության հսկողության պետական կառավարման լիազոր մարմինը համագործակցում է պետական այլ կառույցների հետ, մասնավորապես՝



մաքսային մարմինների հետ:

Ի թիվս այլ պարտավորությունների, որոնք ՀՀ օրենսդրությամբ վերապահված են մաքսային մարմիններին, վերջինս պարտավոր է՝

- ապահովել մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացումը.
- օժանդակել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի, արտաքին տնտեսական կապերի զարգացմանը.
- ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքներն ու տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային սահմանով տեղափոխելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը.
- ապահովել Միության և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված արգելքների ու սահմանափակումների պահպանումը.
- ապահովել մաքսային մարմինների կողմից անձանց մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն ուղղված օժանդակությունը.
- բացահայտել, կանխարգելել և կասեցնել այն հանցագործություններն ու վարչական իրավախախտումները, որոնց նկատմամբ հսկողությունը Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը, կատարել անհետաձգելի քննչական գոր-



ծողություններ և իրականացնել նախնական քննություն նշված հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթների հետաքննության ձևով, մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) գործերով իրականացնել վարչական վարույթ, աջակցություն ցուցաբերել կոռուպցիայի և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի հարցում, հակազդել Միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող մտավոր սեփականության օբյեկտների, թմրանյութերի, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, զենքի ու զինամթերքի, մշակութային արժեքների և այլ առարկաների անօրինական շրջանառությանը.

- աջակցել պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի պահպանության, մարդու կյանքի ու առողջության, կենդանիների ու բույսերի պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների սպառողների շահերի պաշտպանության համար ձեռնարկվող միջոցների իրականացմանը.

- պարզաբանել մաքսային իրավահարաբերությունների բնագավառում անձանց իրավունքներն ու պարտականությունները, օժանդակել արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին ապրանքների և միջազգային



փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսային ձևակերպումների իրականացման գործում.

○ ապահովել Հայաստանի Հանրապետության՝ մաքսային գործին առնչվող միջազգային պարտավորությունների կատարումը, համագործակցել օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների, մաքսային գործի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ:

Ակնհայտ է, որ մաքսային մարմինների պարտավորությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը, ինչպես նաև պետական անվտանգության ապահովման աջակցությունը, որոնք սերտորեն փոխկապակցված են շրջանառության հսկողության նպատակների հետ: Հսկվող ապրանքների ոչ նյութական արժեքների ՀՀ ներմուծման և արտահանման գործընթացների իրականացման մեջ նշանակալից դեր են կատարում մաքսային մարմինները:

Արտաքին տնտեսական գործունեության իրականացման ընթացքում ՀՀ պետական սահմանով ապրանքները և տեխնոլոգիները, այդ թվում՝ հսկվող, ենթակա են մաքսային ձևակերպման և հսկողության: Այս համատեքստում կարևոր է առանձնացնել մաքսային ձևակերպման փուլերը՝

1. նախնական մաքսային ընթացակարգեր և գործողու-



թյուններ, որոնք նախորդում են հիմնական մաքսային ձևակերպմանը,

2. հիմնական մաքսային ձևակերպում,

3. մաքսային գործողություններ, որոնք իրականացվում են մաքսային ձևակերպումից հետո:

Այս համատեքստում հարկ է նշել, որ «մաքսային ձևակերպման գործողություն» եզրույթի տակ ընդունված է հասկանալ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ փաստաթղթային և բեռնային բոլոր գործողությունների ամբողջականությունը, ներառյալ՝ հայտարարագրումը և զննումը, մաքսային վճարումների կատարումը: ԵԱՏՄ մաքսային սահմանով տեղափոխվող և այլ ապրանքներ, օրենսգրքով սահմանված դեպքերում, ԵԱՏՄ մաքսային տարածքում, ինչպես նաև դրանից դուրս գտնվելու և օգտագործվելու համար ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման, եթե այդ առումով այլ բան սահմանված չէ: ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխումն իրակա-նացվում է ըստ նախապես ընտրված մաքսային ընթացակարգի: Մաքսային ընթացակարգը օրենսդրությամբ սահմանվում է որպես նորմերի ամբողջություն, ըստ որի՝ մաքսային կարգավորման նպատակով որոշվում են ԵԱՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների օգտագործման պայմաններն ու կարգը: Ներկայումս գոյություն ունի 17 մաքսային ընթացակարգ, և ՀՀ մաքսային տարածք ապ-





րանքներ կամ տրանսպորտային միջոցներ ներմուծելիս կամ արտահանելիս պետք է ընտրվի դրանցից մեկը՝ ելնելով ապրանքի արտահանման կամ ներմուծման նպատակից<sup>15</sup>:

Ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրվում են ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին, ԵԱՏՄ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքին՝ կարգավորումներից ելնելով:

Ապրանքները և տրանսպորտային միջոցները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու նպատակով կարող են կիրառվել հետևյալ մաքսային հայտարարագրերը.

1. ապրանքների հայտարարագիր,
2. տարանցման հայտարարագիր,
3. ուղևորային մաքսային հայտարարագիր,
4. տրանսպորտային միջոցի հայտարարագիր:

Երկակի ապրանքների արտահանման կամ տարանցման համատեքստում երկակի ապրանքների հետ կապված գործերում կիրառելի են ապրանքների հայտարարագիրն ու տարանցման հայտարարագիր:

Ապրանքների մասին հայտարարագրում նշվում են հետևյալ հիմնական տեղեկությունները, այդ թվում նաև՝ կողավորված ձևով.

---

<sup>15</sup> Տես Խաչատրյան Մ. Մաքսային գործ/ Մ. Խաչատրյան.- Եր.: Տնտեսագետ, 2019, էջ 119-120



1. հայցվող մաքսային ընթացակարգի մասին,
2. հայտարարատուի, մաքսային ներկայացուցչի, ապրանքներն ուղարկողի և ստացողի մասին,
3. միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների և (կամ) այն տրանսպորտային միջոցների մասին, որոնցով ապրանքները տեղափոխվել (տեղափոխվելու) են ԵԱՏՄ մաքսային տարածքով մաքսային հսկողության ներքո,
5. ապրանքների մասին՝
  - անվանում,
  - նկարագրություն,
  - ապրանքների ծածկագիր՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի,
  - ծագման երկրի անվանում,
  - ուղարկող (նշանակման) երկրի անվանում,
  - փաթեթվածքների նկարագրություն (քանակ, տեսակ, դրոշմավորում և հերթական համարներ),
  - քանակ՝ արտահայտված կիլոգրամներով (համաքաշ և զտաքաշ) և չափման այլ միավորներով,
  - մաքսային արժեք,
  - վիճակագրական արժեք,



6. մաքսային վճարների հաշվարկման մասին՝

- մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների դրույքաչափեր, սակագնային առանձնաշնորհումներ
- մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների հաշվարկված գումարներ,
- փոխարժեք, որ սահմանված է ԵԱՏՄ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան և կիրառվում է մաքսային վճարների հաշվարկման համար,

7. արտաքին տնտեսական գործարքի և դրա հիմնական պայմանների մասին,

8. սահմանափակումները պահպանելու համար,

9. ապրանքարտադրողների մասին,

10. ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանների կատարման մասին,

11. ներկայացվող փաստաթղթերի մասին,

12. հայտարարագիր լրացնող անձի մասին,

13. հայտարարագրի լրացման վայրի ու ամսաթվի մասին<sup>16</sup>:

Տարանցման հայտարարագիրը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1.ապրանքներ ուղարկողի և ստացողի մասին՝ ըստ տրանսպորտային փաստաթղթերի,

---

<sup>16</sup> Ավելի մանրամասն տես Խաչատրյան Մ. Մաքսային գործ/ Մ. Խաչատրյան.- Եր.:Տնտեսագետ, 2019, էջ 119-120



2. ապրանքներ ուղարկող և նշանակման երկրների մասին,
  3. հայտարարատուի մասին,
  4. փոխադրողի մասին,
  5. միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի մասին,
  6. ապրանքների անվանումների, քանակի, արժեքների մասին՝ ըստ տրանսպորտային փաստաթղթերի,
  7. ապրանքի ծածկագիր՝ նվազագույնը առաջին վեց նիշով՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան,
  8. ապրանքների համաքաշի կամ ծավալի, ինչպես նաև դրանց քանակի մասին՝ արտահայտված չափման այլ միավորներով՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի կամ ապրանքների նկարագրման և ծածկագրման ՆՀ յուրաքանչյուր ծածկագրի,
  9. բեռնատեղիների քանակի մասին,
  10. ապրանքների նշանակման կետի մասին՝ ըստ տրանսպորտային փաստաթղթերի,
  11. մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված սահմանափակումների պահպանման մասին՝ համապատասխան փաստաթղթերի կցմամբ,
  12. ճանապարհին ապրանքների նախատեսված փոխաբեռնման կամ այլ բեռնային գործողությունների մասին:
- Մաքսային մարմինն իրավունք չունի հայտարարատուից պահանջելու այլ տեղեկություններ՝ բացի նշվածներից:



Մաքսային հայտարարագիրն ընդունելիս մաքսային ձևակերպումների մասնագետը կատարում է հայտարարագրված ապրանքների երկակի նշանակության հատկանիշների առկայության ստուգում, որոնք կարելի է պայմանականորեն առանձնացնել երկու տեսակի՝ ընդհանուր (ԱՏԳ ԱԱ կոդի համապատասխանություն)և հատուկ (հայտարարագրվող ապրանքի անվանման համապատասխանությունը Ցանկերին կամ հայտարարագրվող ապրանքի կիրառելիությունը զանգվածային ոչնչացման զեմքի, դրա տեղափոխման միջոցների, սպառազինության և ռազմական տեխնիկայի այլ տեսակների ստեղծման համատեքստում):

Ապրանքների պատկանելությունը հսկվող ապրանքներին որոշվում է դրանց տեխնիկական պարամետրերի և նկարագրությունների համապատասխանությամբ: Մաքսային մարմինների համար ցանկերը կրում են տեղեկատվական բնույթ, օգտագործվում են օժանդակ նպատակներով: Արտահանման վերահսկողության նպատակով ապրանքների նույնականացումը, ինչպես նաև ցանկերում ընդգրկված ապրանքների հետ արտաքին տնտեսական գործարքներ իրականացնելու, թույլտվություն ստանալու հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացման պարտավորությունը կրում է արտահանողը:

Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառանալ նաև մաքսային ընթացակարգերին, որոնց տեսակները սահմանված



ԵՆ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 127-րդ հոդվածում: Դրանք են.

1. Ներքին սպառման համար բացթողում,
2. Արտահանում,
3. Մաքսային տարանցում,
4. Մաքսային պահեստ,
5. Մաքսային տարածքում վերամշակում,
6. Մաքսային տարածքից դուրս վերամշակում,
7. Ներքին սպառման համար վերամշակում,
8. Ազատ մաքսային գոտի,
9. Ազատ պահեստ,
10. Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն),
11. Ժամանակավոր արտահանում,
12. Վերաներմուծում,
13. Վերաարտահանում,
14. Անմաքս առևտուր,
15. Ոչնչացում,
16. Հրաժարում՝ հօգուտ պետության,
17. Հատուկ մաքսային ընթացակարգ:

Եթե համադրենք երկակի նշանակության ապրանքների արտահանման նորմատիվ իրավական կարգավորումները, կարելի է փաստել, որ նման դեպքերի համար հիմնականում կիրառելի է «Արտահանում» և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգերի՝ արտահանման և վերաարտահանման համար, և «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը՝ տա-



րանցիկ փոխադրումների համար: Հարկ է նշել նաև, որ մաքսային մարմինները հսկվող ապրանքների արտահանման, վերաարտահանման կամ տարանցիկ փոխադրման դեպքերում առաջնորդվում են ինչպես մաքսային օրենսդրության կարգավորումներով, այնպես էլ հսկվող ապրանքների և ոչ նյութական արժեքների շրջանառության հսկողությունը կանոնակարգող օրենսդրությամբ:



## **§ 10. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Ցանկացած երկրում արտաքին տնտեսական գործունեության կարգավորումը գտնվում է պետության իրավասության ներքո, որով սահմանվում են այդ գործունեության մասնակիցների իրավունքները, պարտականությունները և սահմանները, սահմանում արտաքին տնտեսական գործարքների իրականացման կարգը (օրինակ՝ հսկվող ապրանքների առևտուրը կարող է արգելվել կամ սահմանափակվել): Գործնականում պետությունների մեծ մասն օգտագործում է նման սահմանափակումները՝ պաշտպանելու տնտեսական շահերը, ազգային անվտանգությունը, ներքին շուկան:

Բացի այդ, կան բազմաթիվ արգելքներ և սահմանափակումներ, որոնք թելադրված են միջազգային պարտավորությունների կատարմամբ, ինչպիսիք են էմբարգոն և ՄԱԿ-ի այլ պատժամիջոցները, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի չտարածման և այլ տեսակի զենքերի չտարածման պարտավորությունները, որոնք կարող են օգտագործվել ահաբեկչական գործողությունների համար: Որպես կանոն, միջազգային առևտրում նման արգելքներն ու սահմանափակումները (բացառությամբ՝ ՄԱԿ-ի էմբարգոյի) խստիվ արգելող չեն, բայց





թույլատրվում են, եթե արտահանողն ու ներմուծողը կատարում են մի շարք պայմաններ: Այդ պայմաններից է համապատասխան թույլտվությունների կամ լիցենզիաների տրամադրումը: Լիցենզիա է համարվում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվությունը, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթը:

Արտահանման վերահսկման ոլորտում «թույլտվություն» եզրույթի տակ ընդունված է հասկանալ համապատասխան փաստաթուղթ, որն իրավունք է տալիս իրականացնելու հսկվող ապրանքների և ոչ նյութական արժեքների հետ կապված արտաքին տնտեսական գործունեություն:

ՀՀ-ի օրենսդրությամբ սահմանված կարգով հսկվող ապրանքների արտահանումը և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումն իրականացվում են լիազոր մարմնի տրամադրած մեկանգամյա, անհատական, ընդհանուր **թույլտվությունների** հիման վրա:

**Մեկանգամյա թույլտվությունը** տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձին, և իրավունք է տալիս վերջինիս իրականացնելու մեկ հսկվող ապրանքի արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում մեկ վերջնական օգտագործողի: Մեկանգամյա թույլտվությունը տրամադրվում է մեկ տարի ժամկետով, որի հիման վրա անձը



կարող է իրականացնել արտահանման կամ փոխանցման միայն մեկ գործողություն:

**Անհատական թույլտվությունը** տրամադրվում է օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը, և իրավունք է տալիս վերջինիս իրականացնելու հսկվող ապրանքի արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում մեկ վերջնական օգտագործողի: Անհատական թույլտվությունը տրամադրվում է հինգ տարի ժամկետով, իսկ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը հավաստող պայմանագրի գործողության ժամկետը հինգ տարուց պակաս լինելու դեպքում պայմանագրի գործողության ժամկետով՝ առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև առանց արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման:

**Ընդհանուր թույլտվությունը** տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը, և իրավունք է տալիս վերջինիս իրականացնելու ապրանքային դիրքերով առանձնացված հսկվող ապրանքների արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում հայտարարված մի քանի վերջնական օգտագործողների: Ընդհանուր թույլտվությունը տրամադրվում է հինգ տարի ժամկետով, իսկ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը հավաստող



պայմանագրի գործողության ժամկետը հինգ տարուց պակաս լինելու դեպքում պայմանագրի գործողության ժամկետով՝ առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև առանց արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման:

Վերը նշված թույլտվությունների տարբերությունները հստակ պատկերացնելու համար ստորև ներկայացվում են վերջիններիս հիմնական նմանություններն ու տարբերությունները՝

<b>Թույլտվության տեսակ</b>	<b>Ում կարող է տրամադրվել</b>	<b>Ժամկետ</b>	<b>Քանակ</b>	<b>Վերջնական օգտագործող</b>
<b>Մեկանգամյա</b>	անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձ	1 տարի	արտահանման կամ փոխանցման միայն մեկ գործողություն	մեկ վերջնական օգտագործող
<b>Անհատական</b>	Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր	5 տարի (կամ պայմանագրի գործողության ժամկետով )	առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև առանց արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման	մեկ վերջնական օգտագործող



<b>Ընդհանուր</b>	Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր	5 տարի (կամ պայմանագրի գործողության ժամկետով)	առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև առանց արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման	մի քանի վերջնական օգտագործողներ
------------------	--	---	---	---------------------------------

Թույլտվությունների հիման վրա արտահանում և (կամ) փոխանցում իրականացնելու իրավունք ստացած անձը պարտավոր է արտահանման կամ փոխանցման գործողությունը կատարելուց հետո արտահանված ապրանքների և (կամ) փոխանցված արժեքների ցանկը, հաշիվ-ապրանքագիրը և դրանց հանձնման-ընդունման փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը պահպանել հինգ տարի ժամկետով: Այլ կերպ ասած, արտահանման գործընթացի հետ կապված փաստաթղթերը ենթակա են պահպանման (կամ արխիվացման) հինգ տարի ժամկետով: Հարկ է նշել, որ վերը նշված պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից մշտական բնակության մեկնող անձանց վրա:

«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև



երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքը սահմանում է հսկվող ապրանքների արտահանման և ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն ստանալու, ինչպես նաև թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրման կարգը: Մասնավորապես, հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն ստանալու համար արտահանում իրականացնող անձը լիազորմարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում, որտեղ իրավաբանական անձի համար նշվում են իրավաբանական անձի անվանումը, կազմակերպահրավական ձևը, գտնվելու և գործունեություն իրականացնելու վայրերը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեություն իրականացնելու վայրերը, ինչպես նաև իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար հայցվող թույլտվության տեսակը և ժամկետը, պետական գրանցման կամ հաշվառման համարը.

2) օրենքի պահանջներին<sup>17</sup> համապատասխանող վերջնա-

---

<sup>17</sup> վերջնական օգտագործողի հավաստագիրը հսկվող ապրանքներ և (կամ) հսկվող ոչ նյութական արժեքներ ստացող պետության կամ այդ պետության անձի (իրավաբանական կամ ֆիզիկական) անվանման, դրա գտնվելու և գործունեության վայրի մասին, արտահանվող հսկվող ապրանքների կամ փոխանցվող հսկվող ոչ նյութական արժեքների նկարագրի մասին, այդ ապ-



կան օգտագործողի հավաստագիրը.

3) արտահանման ենթակա հսկվող ապրանքների կամ փոխանցվող ոչ նյութական արժեքների տեխնիկական նկարագրերը

4) հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը հավաստող պայմանագրի պատճենը.

5) ապրանքի, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքի հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկին պատկանելության վերաբերյալ արտահանող սուբյեկտի գրավոր հայտարարագիրը կամ «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով սահմանված փորձագիտական եզրակացությունը:

Հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն տալու կամ մերժելու որոշումն ընդունվում է փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթաց-

---

րանքների, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքների վերջնական օգտագործման նպատակի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ է, որը նաև հավաստում է, որ նշված ապրանքները և (կամ) տեղեկատվությունը չեն փոխանցվի որևէ երրորդ երկրի կամ անձի կամ չեն օգտագործվի հայտարարագրված նպատակից բացի որևէ այլ նպատակով առանց արտահանող երկրի պետական կառավարման մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված համաձայնության: Վերջնական օգտագործողի հավաստագիրը ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում հաստատում է վերջնական օգտագործողի երկրի իրավասու պետական կառավարման մարմինը:



քում: Չնայած այն պնդման, որ 20 աշխատանքային օր ժամկետը երկար է դիտվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար, սակայն այս համատեքստում հարկ է նշել, որ համանման ժամկետներ են գործում նաև մի շարք եվրոպական երկրներում:

Թույլտվության տրամադրման մասին դրական դիրքորոշման ձևավորման դեպքում լիազոր մարմինը 7 աշխատանքային օրվա ընթացքում թույլտվության տրամադրման մասին դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև իր դիրքորոշումը համաձայնեցման է ուղարկում Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտե: Հնարավոր են դեպքեր, երբ անհրաժեշտ է ստանալ այլ պետական մարմինների համաձայնությունը: Այդ դեպքում նույն փաստաթղթերի փաթեթը, անհրաժեշտության դեպքում, ուղարկվում է նաև այլ շահագրգիռ պետական մարմիններ:

Շահագրգիռ պետական մարմինների կամ դրանցից որևէ մեկի բացասական կարծիքներին համաձայն չլինելու դեպքում լիազոր մարմինը թույլտվության տրամադրման մասին հարցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին: Սույն դեպքում թույլտվություն տալու կամ մերժելու ժամ-



կետը կարող է երկարաձգվել հինգ աշխատանքային օրով:

Չեն բացառվում թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերը: Այդ դեպքում թույլտվություն ստացած անձը համապատասխան դիմում է ներկայացնում լիազոր մարմին՝ վճարելով թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրման համար սահմանված պետական տուրքը: Լիազոր մարմինը թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը տրամադրում է թույլտվություն ստացած անձի կողմից դիմումը ներկայացվելուց և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքը բազային տուրքի հնգապատիկի չափով վճարվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Դիմումատուն լիազոր մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Դիմումատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիազոր մարմինը թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրման դիմումը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ ժամկետում վճարված լինելու մասին և դիմումատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է թույլտվության իրա-





վունքը հավաստող փաստաթուղթը, թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը: Սույն համատեքստում հարկ է նշել, որ թույլտվությունը կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակն ուժի մեջ է մտնում թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրման որոշման մասին պատշաճ կերպով տեղեկացումից հետո, իսկ դիմումատուի կողմից պետական տուրքը թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրման որոշման մասին պատշաճ կերպով տեղեկացումից հետո վճարման դեպքում՝ դիմումատուի կողմից պետական տուրքը վճարվելու օրվանից:

Համապատասխան փաստաթղթեր ստանալուց և համաձայնություններ ստանալուց հետո լիազոր մարմինը կայացնում է թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշում: Դիմումի մերժման հիմքերն են՝

1) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը թերի են.

2) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը կեղծ են.

3) արտահանման կամ փոխանցման նախատեսվող գործողությունների և օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների (Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը, ինչպես նաև Հայաս-



տանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը) միջև հակասությունների առկայությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ վերաբերելի օրենսդրությամբ նախատեսված են արդեն իսկ տրամադրված թույլտվության գործողության կասեցման կամ դադարեցման հիմքերը:

Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը և փաստաթղթերը թերի լինելու դեպքում պատշաճ կերպով տեղեկացնում է դիմում ներկայացրած անձին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ վերացնելու լիազոր մարմնի մատնանշած թերությունները: Լիազոր մարմնի կողմից դիմումի քննարկման ընթացքը կասեցվում է մինչև դիմում ներկայացրած անձի կողմից փաստաթղթերի թերությունների վերացումը: Թույլտվություն ստանալու դիմումը սահմանված հիմքերով մերժվելու կամ դիմում ներկայացրած անձի կողմից ներկայացված փաստաթղթերի թերությունները սույն մասով սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում լիազոր մարմինը դիմումի մերժման մասին որոշումը կայացնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ կերպով տեղեկացնում է դիմում ներկայացրած անձին՝ նշելով մերժման հիմքերը:

Լիազոր մարմնի կողմից թույլտվության գործողությունը կասեցվում է, եթե ի հայտ են եկել հանգամանքներ, որոնց պայ-



մաններում հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև կարող են ծագել հակասություններ: Թույլտվության գործողության կասեցման, ինչպես նաև կասեցման վերացման մասին որոշում ընդունելուց հետո լիազոր մարմինն այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով տեղեկացնում է արտահանող կամ փոխանցող սուբյեկտին: Թույլտվության կասեցումը չի կարող տևել 30 օրացուցային օրից ավելի: Նշված ժամկետը լրանալուց հետո լիազոր մարմնի կողմից թույլտվության դադարեցման մասին ծանուցում չստանալու դեպքում արտահանող կամ փոխանցող սուբյեկտը իրավունք է ստանում շարունակելու արտահանման կամ փոխանցման գործողությունները<sup>18</sup>:

Լիազոր մարմինը թույլտվության գործողությունը դադարեցնում է՝

1) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի դիմումի հիման վրա.

2) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի լուծարման կամ մահվան դեպքում.

3) եթե պարզվել է, որ թույլտվությունն ստանալիս անձը ներկայացրել է կեղծ կամ թերի փաստաթղթեր.

4) եթե կասեցման հիմք համարվող հանգամանքների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ հսկվող ապրանք-

---

<sup>18</sup> Տե՛ս <https://mineconomy.am/page/305>



ների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև առկա են հակասություններ.

5) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի կողմից շրջանառության հսկողության բնագավառը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում:

Թույլտվության կասեցումը կամ դադարեցումը ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը պատշաճ կերպով տեղեկացնում է արտահանող կամ փոխանցող սուբյեկտին թույլտվության կասեցման կամ դադարեցման մասին՝ նշելով համապատասխան հիմքերը:

Անհատական և ընդհանուր թույլտվությունների տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով<sup>19</sup>:

Թույլտվությունների հիման վրա արտահանման կամ փոխանցման գործողությունը կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մաքսային մարմինները լիազոր մարմին են ներկայացնում տեղեկատվություն արտահանված ապրանքների և (կամ) փոխանցված արժեքների ծածկագրերի, քանակի, արտահանողի անվանման, գտնվելու վայրի, իսկ կազ-

---

<sup>19</sup> Ընդհանուր թույլտվության համար 900005163648 հաշվի համարին 30 000 ՀՀ դրամ,

Անհատական թույլտվության համար 900005163655 հաշվի համարին 30 000 ՀՀ դրամ:



մակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև պետական գրանցման կամ պետական հաշվառման համարի, ստացող երկրի, արտահանված ապրանքը և (կամ) փոխանցված արժեքն ստացողի (օտարերկրյա հիմնարկի, կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ անվանումը և գտնվելու վայրը կամ օտարերկրյա ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը) վերաբերյալ:

### **Հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրումը**

«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն «հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրում» է համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով հսկվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմինը: Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ մաքսային ընթացակարգերին՝ ավելի հստակ պատկերացնելու տարանցիկ փոխադրման առանձնահատկությունները:

ՀՀ ներմուծվող՝ ԵԱՏՄ ապրանք չհանդիսացող ապրանքները ձևակերպվում են հայտարարատուի ընտրած մաքսային



ընթացակարգով՝ ըստ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի, Մաքսային կարգավորումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված կարգի և պայմանների: Մաքսային ընթացակարգերի տեսակները սահմանված են ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 127-րդ հոդվածում: Դրանք են.

1. Ներքին սպառման համար բացթողում,
2. Արտահանում,
3. Մաքսային տարանցում,
4. Մաքսային պահեստ,
5. Մաքսային տարածքում վերամշակում,
6. Մաքսային տարածքից դուրս վերամշակում,
7. Ներքին սպառման համար վերամշակում,
8. Ազատ մաքսային գոտի,
9. Ազատ պահեստ,
10. Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն),
11. Ժամանակավոր արտահանում,
12. Վերաներմուծում,
13. Վերաարտահանում,
14. Անմաքս առևտուր,
15. Ոչնչացում,
16. Հրաժարում՝ հօգուտ պետության,
17. Հատուկ մաքսային ընթացակարգ:

Ընդ որում, մաքսային որևէ ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են ձևակերպվել այլ ընթացակարգերով



կամ նույնանման մաքսային ընթացակարգով՝

1. այն մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար, որով ձևակերպվել են ապրանքները,

2. այն մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցնելու համար, որով ձևակերպվել են ապրանքները,

3. ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին համապատասխան՝ ապրանքների՝ ԵԱՏՄ տարածքով փոխադրման (տրանսպորտային) և (կամ) ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով ԵԱՏՄ մաքսային տարածքի մի մասից մյուս մաս փոխադրման համար<sup>20</sup>:

Հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրումը հիմնականում իրականացվում է մաքսային տարանցման ընթացակարգով, որին համաձայն՝ ապրանքները տեղափոխվում (տարանցվում) են ուղարկող մաքսային մարմնից մինչև նշանակման մաքսային մարմին՝ առանց մաքսային, հարկային, հատուկ, հակազնագցման, հակադեմպինգային վճարումների կատարման: Մաքսային տարանցումը մաքսային ընթացակարգ է, որի անհրաժեշտությունը ծագում է մի երկրից մյուսը ապրանքներ տեղափոխելիս միջանկյալ երկիր ընտրելիս: Ընդ որում, մաքսային տարանցում հնարավոր է իրականացնել ոչ միայն մեկ, այլ մի քանի կետերում՝ երկրներում: Ապրանքների տեղափոխման դեպքում հայտարարատուն մաքսային մարմին է ներկայացնում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված տարանց-

---

<sup>20</sup> Տես Խաչատրյան Մ. Մաքսային գործ- Երևան, Տնտեսագետ, 2019., էւ 69-70



ման հայտարարագիր: Այս ընթացակարգի դեպքում ապրանքների տեղափոխումն ինչպես ԵԱՏՄ մաքսային, այնպես էլ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետության տարածքում կատարվում է ուղարկող և նշանակման մաքսային մարմինների հսկողության ներքո: Մաքսային միության մաքսային օրենսգրքի 215-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային տարանցումը կիրառվում է հետևյալ ապրանքները տեղափոխելիս՝

1) օտարերկրյա ապրանքները՝ ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև մեկնման վայրի մաքսային մարմին,

2) օտարերկրյա ապրանքները՝ ժամանման վայրի մաքսային մարմնից ներքին մաքսային մարմին,

3) օտարերկրյա ապրանքները( ինչպես նաև Մաքսային միության ապրանքները, եթե դա նախատեսված է սույն հոդվածի 5-րդ կետով) ներքին մաքսային մարմնից մինչև մեկնման վայրի մաքսային մարմին,

4) օտարերկրյա ապրանքները՝ մեկ ներքին մաքսային մարմնից մեկ այլ ներքին մաքսային մարմին,

5) Մաքսային միության ապրանքները մեկնման վայրի մաքսային մարմնից մինչև ժամանման վայրի մաքսային մարմին Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքով:

Մաքսային տարանցում ՀՀ տարածքով իրականացնում են տարբեր երկրներ: ՀՀ տարածքը որպես միջանկյալ մաքսային տարածք է դիտարկվում օրինակ Վրաստանի և Իրանի համար:





ՀՀ-ն որպես մաքսային տարանցման կարևոր երկիր է դիտարկվում ինչպես միջազգային պատժամիջոցների տակ գտնվող Իրանի, այնպես էլ ռուս-ուկրաինական կոնֆլիկտում գտնվող ՌԴ-ի համար, առավել ևս հսկվող ապրանքների արտահանման և տարանցիկ փոխանցման համատեքստում:

Հսկվող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումն իրականացվում է տարանցիկ փոխադրման մասին նախնական ծանուցման հիման վրա: Ծանուցումը լիազոր մարմին է ներկայացվում հսկվող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու նախատեսված ժամկետից առնվազն 25 աշխատանքային օր առաջ:

Այլ կերպ ասած, տարանցիկ փոխադրման համար օրենսդիրը սահմանում է հստակ ծանուցման ժամկետները՝ խուսափելու համար հնարավոր ռիկսերից:

Տարանցիկ փոխադրման մասին ծանուցումը ներառում է հետևյալ տեղեկությունները.

- 1) փոխադրման ենթակա հսկվող ապրանքների անվանացանկը,
- 2) փոխադրման միջոցը
- 3) արտահանողի, փոխադրողի և ներմուծողի անվանումը (անունը),
- 4) երթուղին,
- 5) տարանցիկ փոխադրման նախատեսվող ժամկետը.



6) փոխադրման ենթակա հսկվող ապրանքների վերջնական օգտագործման նպատակը:

Ծանուցմանը կցվում են արտահանող պետության հսկվող ապրանքների արտահանման համապատասխան թույլտվության և վերջնական օգտագործողի հավաստագրի պատճենները, եթե դրանք նախատեսված են արտահանող և ներմուծող երկրների կողմից:

Էկոնոմիկայի նախարարության կողմից ծանուցում ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, նախատեսվող տարանցիկ փոխադրման մասին տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ շահագրգիռ պետական մարմիններին՝ կցելով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը:

Այն դեպքերում, երբ հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին կամ վնասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին, լիազոր մարմինը ծանուցումն ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է տարանցիկ փոխադրում իրականացնող անձին և



մաքսային մարմնին և արգելում է տարանցիկ փոխադրումը:

Լիազոր մարմինը ծանուցումն ստանալուց հետո, դրական դիրքորոշում ունենալու դեպքում, 20 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է տարանցիկ փոխադրում իրականացնող անձին և մաքսային մարմնին: Այն դեպքում, երբ ծանուցումը լիազոր մարմին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու նախատեսված ժամկետից առնվազն 25 աշխատանքային օր առաջ, լիազոր մարմինը երկու աշխատանքային օրվա ընթացքում արգելում է տարանցիկ փոխադրումը և տարանցիկ փոխադրում իրականացնող անձին տեղեկացնում է դրա մասին՝ նշելով արգելման պատճառը:

Շահագրգիռ պետական մարմինների կամ դրանցից որևէ մեկի բացասական կարծիքներին համաձայն չլինելու դեպքում լիազոր մարմինը տարանցիկ փոխադրումը թույլատրելու մասին հարցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին: Սույն դեպքում տարանցիկ փոխադրումը թույլատրելու կամ արգելելու մասին որոշման կայացման ժամկետը կարող է երկարաձգվել հինգ աշխատանքային օրով, որի մասին տարանցիկ փոխադրում իրականացնող անձը պատշաճ կերպով տեղեկացվում է:



## **§ 11. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես արդեն նշվել է, «շրջանառության հսկողության» եզրույթի տակ հասկացվում է օրենքով սահմանված կարգով հսկվող ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման նկատմամբ կիրառվող միջոցառումների համակարգ, որի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը: Ստացվում է, որ շրջանառության հսկողության կանոնների խախտումը կարող է վտանգել ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը, ինչպես նաև հանգեցնել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը: Բացի նշվածից, անկհայտ է, որ սահմանված կանոնների խախտումը կարող է նպաստել զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծմանը, հետևաբար ոլորտի հիմնահարցերից է դառնում նաև պատասխանատվության հարցը:



Անդրադառնալով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից իրականացվող հիմնական իրավախախտումներին՝ անհրաժեշտ է նշել հետևյալները՝

- Արտաքին տնտեսական գործունեության իրականացնող սուբյեկտների կողմից հսկվող ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման իրականացում՝ առանց համապատասխան թույլտվության կամ ՀՀ օրենսդրությամբ պարտադիր այլ փաստաթղթերի,

- Կեղծ փաստաթղթերի կամ տեղեկատվության հիման վրա հսկվող ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվության ստացում

- Հսկվող ապրանքների արտահանում և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնման ընթացքում թույլտվության պահանջների և պայմանների, ինչպես նաև ՀՀ վերաբերելի օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար իրավաբանական և ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հարկ է նշել, որ պատասխանատվության վերաբերյալ դրույթը ներառված է նաև «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տա-



րածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման համար անձը ենթակա է պատասխանատվության միայն այն դեպքում, երբ գիտակցել է կամ պարտավոր էր գիտակցել, որ դրանք, բացի քաղաքացիական նպատակներից, կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

Շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար նախատեսված պատասխանատվությունը նախատեսված է համապատասխան քրեական, վարչական և մաքսային օրենսդրությամբ:

Շրջանառության հսկողության կանոնների խախտման համար նախատեսված **քրեական պատասխանատվությունը** ՀՀ-ում սահմանված է քրեական օրենսդրությամբ: Շրջանառության հսկողության կանոնների ուղակի խախտումը հիմնականում դրսևորվում է մաքսանենգությամբ: 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով մաքսանենգության հանցակազմը վերաձևակերպվել է, սակայն դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները առանցքային փոփո-



խությունների չեն ենթարկվել<sup>21</sup>: Համաձայն վերջինիս 340-րդ հոդվածի՝ քրեական պատասխանատվություն է սահմանված (ազատագրվեմանը՝ երեքից վեց տարի ժամկետով) ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի, հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի, ռազմամթերքի, ռադիոակտիվ նյութի կամ ռադիոակտիվ աղբյուրի, միջուկային նյութի, խիստ ներգործող, թունավոր նյութի, զանգվածային ոչնչացման զենքի կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող նյութի կամ սարքի, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքի մաքսանենգության՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով դրանք ապօրինի տեղափոխելու համար, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ դրանց մասին հավաստի տեղեկությունը սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնը, այդ թվում՝ արգելքը կամ սահմանափակումը խախտելու կամ մաքսային կամ այլ փաստաթուղթը խաբեությանը օգտագործելու միջոցով:

---

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց. /Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան., 2022. էջ 361: <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57>(մուտք 26.04.2024)



Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված են ծանրացնող հանգամանքները, մասնավորապես՝ եթե արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) շանտաժով:

Այս պարագայում որպես սանկցիա սահմանված է հինգից տասը տարի ժամկետով ազատազրկումը:

Հարկ է նշել, որ վերը նշված հոդվածի 3-րդ մասով սահմանված է դիտարկվող արարք առանձնապես ծանր դրսևորումը, եթե այն կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից (պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով):

Ներկայացված հանցակազմը եկել է փոխարինելու քրեական նախկին օրենսգրքի 235.1-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին: Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումից հիմնական տարբերությունը վերաբերում է նրան, որ առարկան չի ներառում մշակութային արժեքները, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքները: Այդ արժեքների, ապրանքների մաքսանենգության համար պատասխանատվությունը սահմանվել է քրեական օրենսգրքի





292-րդ հոդվածում<sup>22</sup>:

Անդրադառնալով «մաքսանենգություն» եզրույթին՝ հարկ է նշել, որ վերջինիս սահմանումը տրված է նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես՝ 239-րդ հոդվածի համաձայն՝ *մաքսանենգություն է համարվում 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափը գերազանցող գումարով կանխիկ դրամական միջոցների կամ վճարային գործիքների, Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների՝ օրենքով սահմանված խոշոր չափերով, ինչպես նաև, անկախ չափերից, թմրամիջոցի, հոգեմեդ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի, դրանց համարժեք նյութի (անալոգ) կամ դրանց պրեկուրսորի կամ դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի կամ մշակումն արգելված՝ թմրամիջոց, հոգեմեդ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույսի, ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի, հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի, ռազմամթերքի, ռադիոակտիվ նյութի կամ ռադիոակտիվ աղբյուրի, միջուկային նյութի, խիստ ներգործող, թունավոր նյութի, զանգվածային ոչնչացման զենքի կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգ-*

---

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում



տագործվող նյութի կամ սարքի, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքի՝ Միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով կաթոհինի տեղափոխումը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու, կամ մաքսային կամ այլ փաստաթղթեր խաբեությամբ օգտագործելու միջոցով:

Հարկ է նշել, որ օրենսդիրը արդարացիորեն հստակեցրել է վերը նշված հոդվածը և 2-րդ մասով սահմանել, որ մաքսանենգությունը, որպես քրեորեն պատժելի արարք, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Շրջանառության հսկողության ոլորտում վարչական իրավախախտման համար իրավաբանական և ֆիզիկական անձիք կարող են ենթարկվել պատասխատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն:

Հսկվող ապրանքների արտահանում, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների իրականացրած արտահանման և (կամ) փոխանցման վերաբերյալ գործողությունը կատարելուց հետո արտահանված ապ-



րանքների և (կամ) փոխանցված արժեքների ցանկը, հաշիվ-ապրանքագիրը և դրանց հանձնման-ընդունման փաստը հավաստող համապատասխան փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելը հանգեցնում է վարչական պատասխանատվության, այն է՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Այս համատեքեստում հարկ է նշել, որ Հսկվող ապրանքների արտահանում, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների իրականացրած արտահանման և (կամ) փոխանցման վերաբերյալ փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելու կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է (են) նշանակում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարը կամ նրա լիազորած՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պաշտոնատար անձը (անձինք):



**§ 12. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համաձայն ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Բացի դրանից օրենսդիրը սահմանում է մի շարք սահմանադրական իրավունքներ, որոնք հանդիսանում են իրավական պետության հիմնաքարերից մեկը: Առկա են բազմաթիվ դատական նախադեպեր՝ ուղղված սահմանադրական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի, պաշտպանության առանձնահատկություններին:

Կասկածից վեր է, որ սույն իրավունքները վերաբերելի են նաև արտաքին տնտեսական գործուենություն իրականացնող սուբյեկտներին, քանի որ վերջիններիս իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև արտահանման վերահսկման ոլորտում պետական մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկման մեխանիզմի առկայությունը ՀՀ-ում արտաքին տնտեսական գործունեության կարգավորման հիմնական սկզբունքներից է:

Ինչպես արդեն նշվեց, երկակի նշանակության ապրանքներ-



րի արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման համար ՀՀ-ում սահմանված է հատուկ ընթացակարգ՝ թույլատրության տրամադրում: Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման՝ Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ հսկվող ապրանքների արտահանումը և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումն իրականացվում են լիազոր մարմնի (Էկոնոմիկայի նախարարության) տրամադրած մեկանգամյա, անհատական, ընդհանուր թույլտվությունների հիման վրա:

Նույն օրենքը սահմանում է լիազոր մարմնի կողմից թույլտվություն տրամադրելու մասին դիմումի մերժման հիմքերը, ինչպես նաև արդեն իսկ տրամադրված թույլտվության գործողության կասեցման կամ դադարեցման հնարավորությունները: Մասնավորապես՝ համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման՝ Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության



մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ *Դիմումի մերժման հիմքերն են՝*

1) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը թերի են.

2) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը կեղծ են.

3) արտահանման կամ փոխանցման նախատեսվող գործողությունների և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների (1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը. և 2) Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը) միջև հակասությունների առկայությունը:

Նույն օրենքի նույն հոդվածի համաձայն՝ լիազոր մարմնի կողմից թույլտվության գործողությունը կասեցվում է, եթե ի հայտ են եկել հանգամանքներ, որոնց պայմաններում հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև կարող են ծագել հակասություններ: Այլ կերպ ասած, առկա են հանգամանքներ, որոնք վկայում են փոխանցման իրականացման և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը և/կամ վերջինիս ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովման միջև հակասություն: Նման պայման-



ներում թույլտվության գործողության կասեցման, ինչպես նաև կասեցման վերացման մասին որոշում ընդունելուց հետո լիազոր մարմինն այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով տեղեկացնում է արտահանող կամ փոխանցող սուբյեկտին: Հարկ է նշել, որ թույլտվության կասեցումը չի կարող տևել 30 օրացուցային օրից ավելի: Նշված ժամկետը լրանալուց հետո լիազոր մարմնի կողմից թույլտվության դադարեցման մասին ծանուցում չստանալու դեպքում արտահանող կամ փոխանցող սուբյեկտը իրավունք է ստանում շարունակելու արտահանման կամ փոխանցման գործողությունները:

Անդրադառնալով թույլտվության գործողության դադարեցման առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ լիազոր մարմինը դադարեցնում է թույլտվության գործողությունը, եթե՝

- արտահանող կամ փոխանցող սուբյեկտը ներկայացրել է համապատասխան դիմում,
- արտահանող կամ փոխանցող սուբյեկտը լուծարվել է (կամ մահացել),
- պարզվել է, որ թույլտվությունն ստանալիս անձը ներկայացրել է կեղծ կամ թերի փաստաթղթեր,
- կասեցման հիմք համարվող հանգամանքների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և օրենքով սահմանված նպատակների միջև առկա են հակասություններ,



- եթե գրանցվել է, արտահանող կամ փոխանցող սուբյեկտի կողմից շրջանառության հսկողության բնագավառը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտում:

Անհրաժշտ է նշել, որ թույլտվության կասեցումը կամ դադարեցումը ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը պատշաճ կերպով տեղեկացնում է արտահանող կամ փոխանցող սուբյեկտին թույլտվության կասեցման կամ դադարեցման մասին՝ նշելով համապատասխան հիմքերը:

Այս համատեքստում կարևոր է նշել, որ թույլտվության կասեցման և դադարեցմանը վերաբերվող կարգավորումները չեն պարունակում բողոքարկման մեխանիզմների նկարագրություն: Վերջինս բացակայում է նաև վերը նշված օրենքի հսկվող ապրանքների արտահանման և (կամ) հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն ստանալուն, ինչպես նաև թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրման վերաբերող հոդվածում:

Հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվության տրամադրման մերժման, տրամադրված թույլտվության կասեցման կամ դադարեցման կապակցությամբ կայացված որոշումների բողոքարկման դատական պրատիկայի բացակայության պայմաններում, կարծում ենք, որ վերջիններիս վերաբերելի է ընդհանուր կարգավորումները, այն է՝ բողոքարկում վերադասության





կարգով և բողոքարկում դատական կարգով:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ արտահանման փոխանցման թույլտվություն տալու կամ մերժելու որոշման կայացման ընթացքում շահագրգիռ պետական մարմինների կամ դրանցից որևէ մեկի բացասական կարծիքներին համաձայն չլինելու դեպքում լիազոր մարմինը թույլտվության տրամադրման մասին հարցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին: Փաստ է, որ թույլտվության տրամադրման կամ մերժման որոշումը կայացնում է Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ վերջինիս որոշումները վերադասության կարգով կարող են բողոքարկվել ՀՀ կառավարություն: Այս համատեքստում տարակուսանք է առաջացնում ՀՀ վարչապետին<sup>23</sup> արդեն իսկ ներկայացված թույլտվության տրամադրման կամ մերժման վերաբերյալ դիմումը: Ըստ էության, ստացվում է, որ որոշ դեպքերում վերադասության կարգով բողոքարկումը ենթադրելու է նույն պետական մարմինների ներգրավումը:

Վերը շարադրվածի առումով, կարծում ենք, նպատակահարմար է սահմանել բողոքարկման մեխանիզմ՝ իրավական թնջուկից խուսափելու և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների իրավունքների և ազատությունների թափանցիկ և հասկանալի պայմաններ ստեղծելու համար:

---

<sup>23</sup> Ըստ Հայաստանի Սահմանադրության 147-րդ հոդվածի՝ Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:



### **§ 13. ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ-ՈՒՄ**

1992 թվականի հունիսի 26-ին Մինսկում կնքվել է «Այն հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների ու ծառայությունների արտահանման վերահսկողության հարցերին վերաբերող աշխատանքների կոորդինացման մասին, որոնք կարող են օգտագործվել զանգվածային ոչնչացման զենքի և այնտեղ հասցնելու հրթիռային միջոցների ստեղծման համար» համաձայնագիր, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1995թ. դեկտեմբերի 9-ին թիվ ՆՀ-528 հրամանագրով:

Նշված համաձայնագիրը վավերացնող պետությունների շարքում են Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը և Ուկրաինան: Թուրմենստանը հայտնել է Համաձայնագրին միանալու ցանկություն՝ պայմանով, որ տրամադրվի հումքի և նյութերի մանրամասն ցուցակ: Համաձայնագիրը ուժի մեջ է մտել ստորագրման պահից:

Համաձայնագրի կարևորությունը հասկանալու համար, հատկապես այն երկրների համար, որոնք նախկինում Խորհրդային Միության մաս էին կազմում, անհրաժեշտ է հաշվի առնել պարտավորությունների մեկնաբանման տարբերությունները:



ԵՄ անդամ պետություններում:

«Կողմերը կձգտեն...» եզրույթը կրում է իմերաստիվ բնույթ, և համապատասխանաբար կյանքի է կոչվում: Մինչդեռ հետխորհրդային տիրույթում նույն ձևակերպումը հիմնականում ընկալվում է որպես մտադրությունների արտահայտություն, որոնք չեն ենթադրում կոշտ պարտավորություններ: Մոտեցումների այս տարբերությունը կարող է ազդել տարածաշրջանում արտահանման վերահսկողության ոլորտում միջազգային իրավունքի զարգացման վրա՝ հատկապես հաշվի առնելով, որ ԱՊՀ միջազգային պայմանագրերի շատ ասպեկտներ վերցված են ԵՄ պրակտիկայից :

1992 թվականին՝ Համաձայնագրի ստորագրման պահին, արտահանման վերահսկման միջազգային ռեժիմների համակարգը նոր էր սկսել ձևավորվել, ինչը նույնպես ունեցավ իր դերը Համաձայնագրի բովանդակության և պայմանների որոշման հարցում: Համաձայնագրի 4-ից 7-րդ հոդվածները համարվում են առավել նշանակալի, քանի որ վերջիններս սահմանում են անդամ պետությունների պարտականությունները՝ «իրենց պետություններում անհապաղ ստեղծելով արտահանման վերահսկողման ազգային մեխանիզմներ»: Ազգային մեխանիզմների նպատակն էր «զանգվածային ոչնչացման զենքի և այնտեղ հասցնելու հրթիռային միջոցների ստեղծման ժամանակ կիրառվող հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների և ծառայությունների առանձին տեսակների արտահան-



ման նկատմամբ վերահսկողության ապահովումը», իսկ մեթոդը՝ «արտահանման լիցենզավորման և մաքսային հսկողության սահմանումը»:

Ներկայումս 1992 թվականին Մինսկում ստորագրված համաձայնագիրը տերմինաբանության համատեքստում համարվում է հնացած և ամբողջ ծավալով չի արտացոլում արտահանման վերահսկման ժամանակակից պահանջները:

Համաձայնագրով նախատեսված էր միասնական ցանկերի ստեղծում, սակայն դա մինչ օրս հիշյալ Համաձայնագրի շրջանակներում չի իրականացվել: Համաձայնագրի դրույթներն ինքնին պարտադիր բնույթ չեն կրում կողմերի համար, ինչը լայն դաշտ է թողնում մեկնաբանման և ոչ միշտ համապատասխան կատարման համար: Օրինակ, 7-րդ հոդվածը, որը վերաբերում է հսկվող նյութերի վերաարտահանմանը, գործնականում չեն պահպանվում, քանի որ որոշ ազգային օրենսդրություններ չեն պահանջում անհրաժեշտ համաձայնություն նման գործողությունների համար: Համաձայնագրի ստորագրման պահից կողմերից ոչ մեկը փոփոխություններ կամ լրացումներ չի առաջարկել, ինչը վկայում է այն մասին, որ անդամ պետությունների մեծ մասը բավարարված է այն իրավիճակով, երբ պաշտոնապես գոյություն ունի միջազգային համաձայնագիրը, իսկ իրականում յուրաքանչյուր պետություն ազատ է մնում իր գործողություններում: Սա որոշակի բարդություններ է ստեղծում չտարածման և արտահանման վերահսկման միջազգային իրա-



վունքի գլոբալ փոփոխությունների համատեքստում:

Հարկ է նաև նշել, որ Համաձայնագրում նախատեսված չեն մասնակից երկրների միջև արտաքին տնտեսական գործունեության արտոնյալ պայմաններ սահմանող նորմեր: Սա նշանակում է, որ հսկվող ապրանքների և տեխնոլոգիաների փոխանցումը Հայաստանից այլ մասնակից պետության դեպքում ենթակա է նույն կանոններին, ինչ փոխանցումը համաձայնագրի մեջ չմտնող ցանկացած այլ երկիր:

Վերը նշված խնդիրները լուծելու, ինչպես նաև տարածաշրջանում տնտեսական արդյունավետ ինտերգրում ապահովելու նպատակով 2010 թվականին ստեղծվեց Եվրասիական տնտեսական միության Մաքսային միությունը (ԵԱՏՄ ՄՄ), որը Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության արտահանման վերահսկողության ոլորտում միասնական պայմանագրային բազայի ձևավորումն էր: 05.07.2010թ.-ին ԵվրԱզԷՄ-ի միջպետական խորհրդի թիվ 52 որոշմամբ նախատեսվում էր մաքսային միության անդամ միությունների համար արտահանման վերահսկողության միասնական համակարգի և՛ ապրանքների, և՛ տեխնոլոգիաների միասնական ցուցակերի ձևավորում<sup>24</sup>: 01.01.2014 թվականից ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսա-

---

<sup>24</sup> 05.07.2010 թ. «Մաքսային միության անդամ պետությունների արտահանման վերահսկողության մասին» թիվ 52 որոշում, [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_102281/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_102281/)



կան միության մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ գործող Մաքսային միության հիմքի վրա ձևավորվում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպությունը, որին 2015 թ. հունվարին միացել է Հայաստանի Հանրապետությունը, իսկ 2015 թ. օգոստոսին՝ Ղրղզստանի Հանրապետությունը:

Պայմանագրի դրույթներին համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի ժամանակ չեն կիրառվում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցներ, ինչպես նաև Միության միասնական տարածքում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատությունը: Բացի դրանից՝ անդամ պետությունները պարտավորվում էին ներդաշնակեցնել պետական վերահսկողության շատ տեսակներ:<sup>25</sup> Հարկ է նշել, որ Պայմանագրի որոշ դրույթներ այդպես էլ կյանքի չկոչվեցին: Պայմանագրի հիմնական դրույթները ուղղված էին Մաքսային միության միասնական մաքսային տարածքի արդյունավետ գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը և միասնական տնտեսական տարածքի ձևավորմանը, փոխադարձ առևտրում և երրորդ երկրների հետ առևտրում հավասարակշռված, փոխշահավետ առևտրային և գիտատեխնիկական

---

<sup>25</sup> Ավելի մանրամասն տես <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>



կապերի զարգացմանը նպաստելուն, իրենց պետությունների ազգային շահերի պաշտպանության և անվտանգության ապահովմանը (այդ թվում՝ ահաբեկչությանը հակազդելուն): Նման փաստաթղթի ընդունումը ցույց կտար ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների հավատարմությունը ՁՈԶ-ների չտարածման սկզբունքներին: Համաձայնագրի հիմնական դրույթներն իրագործելու համար Միության բոլոր պետությունները պետք է այս կամ այն չափով մասնակցեն միջազգային պայմանագրերին և արտահանման վերահսկման ռեժիմներին: Այս համատեքստում հարկ է նշել, որ անդամ պետություններն ունեն տարբեր ներգրավվածություն արտահանման վերահսկման գործընթացներում, անդամակցում են տարբեր միջազգային ռեժիմներին, ուստի և ունեն տարբեր օրենսդրական կարգավորումներ: ԵԱՏՄ անդամ պետությունների արտահանման վերահսկման ոլորտի օրենսդրական ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ զոյություն ունեն մի շարք ազգային գործոններ, որոնք ուղիղ ազդեցություն ունեն արտահանման վերահսկման համակարգի վրա<sup>26</sup>: Մասնավորապես՝

- **Միջազգային վերահսկողման ռեժիմներին մասնակ-**

---

<sup>26</sup> Ств Мозжегорова Ольга Алексеевна, Пышкин Юрий Вячеславович ОСОБЕННОСТИ ОСУЩЕСТВЛЕНИЯ ЭКСПОРТНОГО КОНТРОЛЯ В УСЛОВИЯХ ФУНКЦИОНИРОВАНИЯ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА // Вестник Российской таможенной академии. 2017. №4. URL <https://cyberleninka.ru/article/n/osobennosti-osuschestvleniya-eksportnogo-kontrolya-v-usloviyah-funksionirovaniya-evraziyskogo-ekonomicheskogo-soyuza> (дата обращения: 11.05.2024).



**ցության տարբեր աստիճան:** Ինչպես նշվեց, ԵԱՏՄ երկրները տարբեր մոտեցումներ ունեն զանգվածային ոչնչացման զենքի տարածման վերահսկման միջազգային համաձայնագրերին և նախաձեռնություններին մասնակցելու հարցում: Վերջինս ներառում է պարտավորությունների և ստանդարտների համապատասխանության տարբեր մակարդակներ, որոնք սահմանված են այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են միջուկային մատակարարների խումբը կամ հրթիռային տեխնոլոգիայի վերահսկման ռեժիմը: Մասնակցության մակարդակների տարբերությունը ստեղծում է բացեր և անհամապատասխանություններ ազգային վերահսկողության համակարգերում, ինչը բարդացնում է անդամ երկրների միջև համագործակցությունն ու համակարգումը:

- **ԵԱՏՄ շրջանակներում արտահանման վերահսկողության միասնական մոտեցման բացակայություն:** Այլ կերպ ասած, յուրաքանչյուր երկիր մշակում է իր սեփական կանոններն ու ընթացակարգերը: Այս մոտեցումը նվազեցնում է համակարգի ընդհանուր թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, բարդացնում է տեղեկատվության փոխանակումն ու համագործակցությունը միջսահմանային մակարդակում և պոտենցիալ «թույլ օղակներ» է ստեղծում արտահանման վերահսկողության շղթայում:

- **Հսկվող ապրանքների և տեխնոլոգիաների միասնական ցանկերի բացակայություն:** Հսկվող ապրանքների և





տեխնոլոգիաների միասնական ցանկը կարևոր է արդյունավետ և հետևողական վերահսկողություն ապահովելու համար: Միասնական ցանկերի բացակայության դեպքում ԵԱՏՄ երկրները կիրառում են տարբեր չափանիշներ՝ որոշելու, թե ինչն է ենթակա արտահանման սահմանափակումների, ինչը կարող է հանգեցնել ռիսկերի ազգային մաքսային պրակտիկայում և բաց թողնել անվտանգության հնարավոր կարևոր ասպեկտները: Բացի այդ, նման ցրված մոտեցումը մեծացնում է ապօրինի առևտրի և պատժամիջոցների շրջանցման ռիսկը:

Այս գործոնները, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) արտաքին սահմաններ մաքսային ստուգումների տեղափոխման հետ համատեղ, կարող են ստեղծել պայմաններ, որոնք թույլ են տալիս արտաքին տնտեսական գործունեության անբարեխիղճ մասնակիցներին օգտագործել ստեղծված իրավիճակը ապօրինի արտահանումներ կազմակերպելու համար: Սա վերաբերում է հսկվող ապրանքներին և տեխնոլոգիաներին, որոնք կարող են ուղղվել երրորդ երկրներ՝ առանց համապատասխան թույլտվության և վերահսկողության, ինչը լուրջ վտանգ է ներկայացնում տարածաշրջանային և միջազգային անվտանգության համար:

Գաղտնիք չէ, որ արտահանման վերահսկողման հիմնական տարրերից մեկը մաքսային հսկողությունն է: Ինչպես արդեն նշվել է, այն կիրառում է սահմանված ընթացակարգերը՝ հսկվող ապրանքներն ու տեխնոլոգիաները պետական սահ-



մաններով տեղափոխելու համար: Այսպիսով, գործող ազգային օրենսդրության շրջանակներում արտահանման հսկողության արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն թույլատրելի ընթացակարգերի և մաքսային հսկողության միջև սերտ փոխգործակցության դեպքում:

Միևնույն ժամանակ, ԵԱՏՄ անդամ երկրների արտահանման վերահսկման օրենսդրության տարբերությունները, ինչպես նաև ներքին առևտրի համատեքստում մաքսային հսկողության վերացումը պոտենցիալ ռիսկեր են ստեղծում երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների տարածման համար: Այդ ռիսկերը ծագում են ինչպես բուն ԵԱՏՄ տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Նման խնդրի օրինակ կարող է լինել այն իրավիճակը, երբ միության երկրներից մեկում հսկվող ապրանքը կամ տեխնոլոգիան կարող է հեշտությամբ տեղափոխվել մեկ այլ երկիր, որտեղ դրանք նման վերահսկողության չեն ենթարկվում, որից հետո արտահանվել ԵԱՏՄ սահմաններից դուրս՝ երրորդ երկրներ: Նման չարտոնված արտահանումը, փաստորեն, խաթարում է արտահանող երկրի կողմից միջազգային պարտավորությունների կատարումը, որոնք ուղղված են հսկվող ապրանքների և տեխնոլոգիաների տարածումը կանխելուն:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում, արտահանման վերահսկողման հետ կապված, խնդիրների լուծման համար չափազանց կարևոր է միասնական օրենսդրա-



կան բազայի ստեղծումը, որն ընդհանուր կլինի միության բոլոր անդամ պետությունների համար: Սա ենթադրում է ոչ միայն արտահանման հսկողության միասնական կարգի ձևավորում, այլև անհապաղ ընդունում, ինչպես նաև այդպիսի հսկողության ենթակա ապրանքների և տեխնոլոգիաների միասնական ցուցակների մշակում և հաստատում: Արտահանման վերահիշման նման միասնական համակարգի իրականացումը թույլ կտա արդյունավետորեն դիմակայել հսկվող ապրանքներ և տեխնոլոգիաներ չսանցիավորված ձեռքբերերման փորձերին:

Այս խնդիրը հատկապես արդիական է դառնում միջազգային ահաբեկչական խմբավորումների ուժեղացված ակտիվության լույսի ներքո: Այս համատեքստում ԵԱՏՄ շրջանակներում արտահանման վերահսկողության համակարգված մոտեցումը ոչ միայն կամրապնդի տարածաշրջանային անվտանգությունը, այլև կբարձրացնի միջազգային վստահությունը միության հսկիչ մեխանիզմների նկատմամբ:

Նման միջոցառումների իրականացումը պահանջում է ամուր համատեղ աշխատանք և անդամ երկրների օրենսդրությունների ներդաշնակեցում՝ հաշվի առնելով, որ արտահանման արդյունավետ վերահսկողությունը ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային և միջազգային անվտանգության հարց է: Այսպիսով, ԵԱՏՄ շրջանակներում արտահանման վերահսկողման գործընթացների միասնականացումը կարող է առանցքային տարր դառնալ տարածաշրջանում ավելի անվտանգ և կայուն



տնտեսական միջավայրի ստեղծման գործում, ինչն իր հերթին կամրապնդի տնտեսական ինտեգրումը և կուժեղացնի անդամ երկրների միջև համագործակցությունը անդրազգային սպառնալիքների դեմ պայքարում:



## **§ 14. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Արտահանման վերահսկումը հիմնականում կապված էր այն ապրանքների (ֆիզիկական օբյեկտների) հետ, որոնք հնարավոր է՝ կրում են երկակի բնույթ, կարող են նույնականացվել և վերահսկվել: Բայց քանի որ մի շարք երկրներ շարունակում էին CBRN (Քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական և միջուկային նյութեր կամ զենք) զենքեր արտադրել, պարզ դարձավ, որ կարևոր է հասկանալ տեխնիկական գիտելիքների դերը, ինչպես նաև դրանց ձեռքբերման և վաճառքի առանձնահատկությունները:

Հայտնաբերված առաջին դեպքերից մեկը իրաքցի գիտնական՝ Ռիհաբ Ռաշիդ Թահա Ալ-Ազավին էր, ով ղեկավարում էր կենսաբանական զենքի ստեղծման ծրագիրը և հայտնի էր որպես Դոկտոր Հերման: Վերջինս դոկտորի կոչում էր ստացել Նորվիջի Արևելյան Անգլիայի համալսարանի կենսաբանական գիտությունների դպրոցում (1980-1984), և նրա ուսումնասիրությունները կենտրոնացած էին բույսերի տոքսինների վրա: Առավել հայտնի օրինակներից է պակիստանցի միջուկային հարցերի փորձագետ Ա. Կ.Խանը, ով սովորել էր Նիդեռլանդներում և նույնիսկ աշխատել է միջուկային ոլորտի հետ կապված հաստատություններում: Հնդկաստանի անցկացրած առաջին միջուկային փորձարկումից հետո, Խանը կամավոր ստանձնեց Պա-



կիստանի միջուկային ծրագրի մշակման և զարգացման գործընթացը՝ օգտագործելով իր ձեռքբերած փորձը:

Վերը նշված երկու օրինակները ցույց են տալիս, որ 1970-ականների և 1980-ականների սկզբներին մի շարք երկրներում հնարավոր էր ՋՈՁ զենքի մշակման համար անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ ձեռք բերել: Բայց ամեն ինչ փոխվեց, երբ վերը նկարագրված պայմաններում ձեռք բերված գիտելիքները սկսեցին օգտագործվել ռազմական նպատակներով: Սկսեցին մշակվել տարբեր միջազգային իրավական փաստաթղթեր, իսկ պետությունները, իրենց հերթին, սկսեցին գիտական ոլորտում վերահսկողություն իրականացնել: Սակայն դա ժամանակ պահանջեց, և մինչ օրս շատ երկրներում դեռևս ներդրված չեն անհրաժեշտ փաստաթղթեր:

Գիտության զգայուն ոլորտներում սովորելու կամ աշխատելու համար օտարերկրյա քաղաքացիներ ընդունող երկրների ամենամեծ մարտահրավերներից մեկը գիտական և տեխնոլոգիական ազատության ու առաջընթացի և անվտանգության հավասարակշռությունն է: Այս համատեսքտում կարևոր է հասկանալ՝ գիտության մեջ ազատության և պատասխատավության (անվտանգության) հավասարակշռության լավագույն տարբերակը գիտական համայնքի իրազեկվածության բարձրացումն է:

Այլ կերպ ասած, գիտատեխնիկական գլոբալիզացիայի ներկա դարաշրջանում «գիտնականներ առանց սահմանների» նման նախաձեռնությունները լայն տարածում են գտել: Վերջին-



ներս նպաստում են միջպետական հետազոտությունների շրջանակներում գիտելիքների և փորձի ազատ փոխանակմանը: Այս հետազոտական նախագծերը ոչ միայն խրախուսվում են, այլև ստանում են զգալի ֆինանսավորում, համբավ են բերում ինչպես հետազոտող գիտնականներին, այնպես էլ կազմակերպությանը: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ հետազոտությունները կրում են երկակի բնույթ կամ իրականացվում են երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների կիրառմամբ: Այս պայմաններում են կարևորվում գիտության մեջ ազատության, անվտանգության և պատասխատավության սկզբունքները:

Ինչպես արդեն նշվել էր, եթե հսկվող ապրանքների տեղաշարժը հնարավոր է հսկել, ոչ նյութական աժրեքների արտահանման վերահսկումը գրեթե անհնար է: Նույն իրավիճակը տիրում է նաև գիտական ոլորտում:

Ոչ նյութական արժեքների արտահանումը կամ փոխանցումը կարող է իրականացվել տարբեր սցենարներով, մասնավորապես՝

- գիտական և տեխնիկական տեղեկատվության տարածում տարբեր ուղիներով, ինչպիսիք են գիտական, տեխնիկական և ուսումնական գրականությունը, տեղեկատու գրքերը և ակնարկները, տեխնիկական ստանդարտները և հրահանգները, արտոնագրերի նկարագրությունները, գիտաժողովների նյութերը և տեխնիկական փաստաթղթերի հատուկ տեսակները,

- համատեղ հետազոտական նախագծեր, որոնք ոչ միայն



նպաստում են համագործակցությանը, այլև հեշտացնում են տարբեր ոլորտներում արդյունքների և ձեռքբերումների փոխանակումը,

- ուսումնական ծրագրեր, որոնք ներառում են ուսանողների փոխանակում և պրակտիկա երիտասարդ գիտնականների և մասնագետների համար՝ նպաստելով գիտելիքների և հըմ-տությունների գլոբալ փոխանակմանը,

- տեղեկատվության փոխանակում միջազգային գիտաժողովների և սիմպոզիումների, ինչպես նաև միջազգային մասնագիտացված և կորպորատիվ ցուցահանդեսների ժամանակ, որոնք ծառայում են որպես գիտական և տեխնոլոգիական առաջադեմ զարգացումների փոխանակման հարթակներ:

Տեխնոլոգիաների և գիտատեխնիկական տեղեկատվության այդպես կոչված «անտեսանելի» փոխանցումը արտահանման վերահսկողության լուրջ խնդիրներից է, քանի որ արտահանման կամ փոխանցման գործընթացի վերահսկումը պահանջում է անհատական մոտեցում յուրաքանչյուր գործի նկատմամբ:

Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառանալ ոչ նյութական արժեքների հասկացությանը: Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ





օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ **երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ կամ հսկվող ոչ նյութական արժեքներ** են համարվում ցանկացած բնույթի տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան՝ կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար: Կարևոր է ընդգծել երկու ասպեկտ՝ ինչ է արտանահվում և ինչ եղանակով է արտահանվում (օրինակ՝ էլ. փոստով):

Հարկ է նշել, որ տարբեր պետություններում տարբեր կերպ են փորձում լուծել ոչ նյութական հսկվող արժեքների արտահանման խնդիրը: Երբեմն դա իրականացվում է համապարփակ վերահսկման եղանակով:

Բանակցային և ուսուցման գործընթացները, հատկապես անձնական շփումները վերահսկելը մեծ մարտահրավեր է: Եթե զեկույցների, դասախոսությունների, վերապատրաստման ծրագրերի և հաղորդագրությունների տեքստերը կարող են նախապես հաստատվել, ապա անհնար է կանխատեսել, թե կոնկրետ ինչ տեղեկատվություն կարող է փոխանակվել հասարակ զրույցի ընթացքում: Այս անկանխատեսելիությունը դժվարացնում է ոչ նյութական տեխնոլոգիաների փոխանցման կարգավորումը և դժվարացնում է զգայուն տեղեկատվության համարժեք վերահսկողության և մոնիտորինգի ապահովումը:



Բացի այդ, տեխնոլոգիաների փոխանցումը էլեկտրոնային միջոցներով, ինչպիսին է ինտերնետը, լրացուցիչ մարտահրավերներ է ստեղծում: Թվային հաղորդակցության բնույթը դժվարացնում է տեղեկատվության հոսքի արդյունավետ վերահիշուկումն ու կարգավորումը: Չնայած կիրառանվտանգությանն առնչվող ընթացակարգերի և մոնիտորինգի՝ դրանք միշտ չէ, որ բավարար են չարտոնված փոխանցումները կանխելու համար:

Մեկ այլ մարտահրավեր է համարվում մասնագետների արտագաղթը, որը հաճախ անվանում են «ուղեղների արտահոսք»․ սա լուրջ մտահոգություն է: Երբ ոլորտի մասնագետները տեղափոխվում են այլ երկրներ, իրենց հետ տանում են արժեքավոր գիտելիքներ և փորձ, որոնք կարող են փոխանցվել, համատեղ հետազոտությունների կամ նույնիսկ պատահական զրույցների միջոցով՝ ավելի բարդացնելով զգայուն տեղեկատվության տարածումը վերահսկելու ջանքերը:

Ստեղծված իրավիճակում հստակ չափանիշների բացակայության և երկակի օգտագործման հնարավոր տեղեկատվության «անգիտակցաբար» փոխանցումից խուսափելու անհրաժեշտության պատճառով կառավարությունը հիմնականում հենվում է տոտալ վերահսկողության պրակտիկայի վրա: Այս մոտեցումը հաճախ հանգեցնում է թյուրիմացությունների և դժգոհությունների գիտական հանրության մոտ, որը ստիպված է լինում սահմանափակել իր հաղորդակցությունը: Բացի այդ, անհաջող է ստացվում, քանի որ գիտական հանրությանը տեղեկացնելը հղի է որոշակի դժվարություններով:



Վերահսկողության նման կոշտ համակարգը կարող է հանգեցնել անարդյունավետության և զգուշավորության՝ անհիմն կանխելով տեղեկատվության ազատ տարածումն ու հնարավոր համագործակցությունը, որոնք կենսական նշանակություն ունեն գիտական առաջընթացի համար: Հետազոտողները և գիտնականները, մտավախություն ունենալով պատահաբար խախտել կանոնները, կարող են խուսափել էական նշանակություն ունեցող նորարակական գաղափարների փոխանակումից: Այս մոտեցումը ճնշում է ոչ միայն գաղափարների փոխանակումը, համագործակցության հավանականությունը, այլև հետաձգում է նոր տեխնոլոգիաների մշակումն ու տարածումը: Այլ կերպ ասած, եթե բոլոր երկրներում լինի համապարփակ վերահսկողություն գիտության նկատմամբ, մի շարք երկրներում գիտությունը գրեթե չի զարգանա:

Համապարփակ վերահսկողության պրակտիկան կարող է հանգեցնել բյուրոկրատական խնդիրների, որտեղ գիտնականները ստիպված կլինեն առաջնորդվել բարդ և հաճախ անհասկանալի կարգավորումներով: Շարունակական վերահսկողության և նույնիսկ սովորական տեղեկատվության փոխանակման շուրջ թույլտվությունը կարող է հանգեցնել զգալի ձգձգումների՝ ազդելով հետազոտական նախագծերի արդյունավետության վրա: Բացի դա հստակ չափանիշների բացակայության պայմաններում իրավիճակը կարող է սրվել նաև վերահսկողության միջոցների կամայական կիրառմամբ, երբ գերակշռում է սուբյեկտիվ մոտեցումը խնդրո առարկային:



Ավելին, համապարփակ վերահսկողության միջոցների ներդրումը կարող է ավելի լայն հետևանքներ ունենալ միջազգային գիտական համագործակցության համար: Նման վերահսկողության տակ գտնվող երկրները կարող են հայտնվել մեկուսացման մեջ, քանի որ միջազգային գործընկերները չեն ցանկանա մասնակցել այնպիսի համագործակցության, որը կարող է ենթարկվել կարգավորող մարմինների կողմից անհասկանալի և անկանխատեսելի վերահսկողության: Նման մեկուսացումը կխոչընդոտի գիտական առաջընթացը:

Այս մարտահրավերների լուծման համար լիազոր մարմիններին անհրաժեշտ է մշակել երկակի նշանակության տեղեկատվության կարգավորման հստակ, հետևողական և թափանցիկ չափանիշներ: Նման պայմաններում գիտական հանրությունը կկարողանա ավելի հստակ պատկերացումներ ունենալ հնարավոր ռիսկերի մասին, ինչը, իր հերթին, կնվազեցնի ակամա խախտումների հավանականությունը և կնպաստի ավելի բաց և համագործակցային հետազոտական միջավայրի ստեղծմանը: Բացի այդ, գիտական համայնքի ներգրավումը այս չափանիշների մշակման գործում կօգնի ապահովել գործընթացի արդյունավետությունը, քանի որ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցության պայմաններում է հնարավոր ստանալ դրական արդյունքներ:

Այս խնդրի լուծման համար ՀՀ-ում Եվրոպական Միության կողմից ՄԳՏԿ-ի միջոցով երկակի նշանակության տեխնոլոգիաների արտահանման վերահսկման նպատակային նախա-



ձեռնության շրջանակներում ֆինանսավորվել են մի քանի նախագծեր, որոնք ուղղված են իրազեկվածության բարձրացմանը, դասընթացների (նախատեսված ուսանողների, դասախոսների և ադմինիստրատիվ անձնակազմի համար ) և դասագրքի կազմմանը:

ՀՀ-ի երկու համալսարաններում՝ քրեական և քաղաքացիական իրավունքի ֆակուլտետներում, ինչպես նաև դեղագործական գիտությունների ֆակուլտետում, ներմուծվել է արտահանման վերահսկողությանը նվիրված մագիստրոսական դասընթաց, որը թույլ է տվել համապարփակ պատկերացում կազմել արտահանման վերահսկման սկզբունքների և պրակտիկայի վերաբերյալ:

Դասընթացի արդյունավետության բարձրացման համար մինչև դասընթացի սկիզբը իրականացվել են մի շարք հարցումներ և հարցազրույցներ ինչպես ուսանողների, այնպես էլ համալսարանի աշխատակիցների հետ:

Հետադարձ կապը և հարցումների արդյունքները կարևոր դեր են խաղացել ուսումնական ծրագրի կազմման և կատարելագործման հարցում, քանի որ այս պարագայում դասընթացը կազմվել էր՝ հիմք ընդունելով ինչպես պարտադիր ուսուցման համար անհրաժեշտ թեմաները, այնպես էլ շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները:

Բացի այդ, անցկացվել են մասնագիտացված դասընթացներ դասախոսների և վարչական անձնակազմի համար: Այս



նախաձեռնության նպատակն է արտահանման վերահսկողության ոլորտում գիտելիքներն ու լավագույն փորձը հասանելի դարձնել ոչ միայն ուսանողներին, այլև ներգրավվել ուսումնական հաստատության ամբողջ անձնակազմին:

Վերապատրաստելով պրոֆեսորադասախոսական կազմին և վարչական անձնակազմին՝ ծրագիրը նպաստեց արտահանման վերահսկողության ամբողջական ըմբռնման ձևավորմանը՝ թույլ տալով ամբողջ ակադեմիա կան համայնքին օգտվել ընդլայնված փորձից և իրազեկությունից:

Հիմնվելով այս մագիստրոսական դասընթացների հաջողությունների վրա՝ մշակվել է սույն ուսումնական ձեռնարկը, որն իր տեսակի մեջ հայերենով ուսումնական առաջին ձեռնարկն է՝ կապված արտահանման վերահսկման իրականացման կարգավորման հետ: Այն ընդգրկում է արտահանման վերահսկողության բոլոր առանցքային ասպեկտները, որոնք հատուկ մշակված են հայ ուսանողների և մասնագետների համար: Ձեռնարկը տրամադրվել է ինչպես ուսումնական և գիտական կազմակերպություններին, այնպես էլ շահագրգիռ պետական մարմիններին և նպատակ ունի խթանել արտահանման վերահսկողության կանոնների և պրակտիկայի ավելի խորը ըմբռնումը՝ դրանով իսկ նպաստելով ակադեմիական իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Նախագծի շրջանակներում մշակվել է նաև էլեկտրոնային ուսուցման հարթակ: Այս հարթակը միավորում է Հայաստանի



Հանրապետությունում արտահանման վերահսկողության հետ կապված բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, օրենքներն ու հղումները: Էլեկտրոնային ուսուցման հարթակը կոչված է դառնալու համապարփակ ռեսուրս, որն ապահովում է հիմնական նյութերի հեշտ հասանելիությունը և նպաստում է շարունակական կրթությանը և արտահանման վերահսկողության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Գործարկելով գիտելիքների կենտրոնացված հարթակ՝ (<https://cirngo.org/elearning/>) նպատակ է դրվել աջակցել արտահանման վերահսկողության մեջ ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի շարունակական ուսուցմանը և մասնագիտական զարգացմանը:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 1999 թվականի փետրվարի 8-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի մասին» թիվ 59 որոշում
2. ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի կանոնադրության հաստատելու մասին» թիվ 190 որոշում
3. ՀՀ կառավարության 1999 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունից երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման հսկողության կարգը եվ երկակի նշանակության ապրանքների ու տեխնոլոգիաների ցանկերը հաստատելու մասին» թիվ 463 որոշում
4. ՀՀ կառավարության 2003 թվականին սեպտեմբերի 4- «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» ի թիվ 1120-Ա որոշում
5. ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին» N 765-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց տարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովի կանոնակարգն ու անհատական կազմը հաս-





տատելու մասին» N 212-Ն որոշում

7. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «ՀՀ-ից արտահանվող և ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ի N 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1785-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի 1540 բանաձևի իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային գործողությունների 2015-2020 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 95-Ա որոշում
9. ՀՀ կառավարության 2023 թվականի 25 մայիսի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 808-Ն որոշում
10. 2003 թվականի սեպտեմբերի 24-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» ՀՀ օրենք
11. 2010 թվականի ապրիլի 8-ի «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքը



12. «Մաքսային միության անդամ պետությունների արտահանման վերահսկողության մասին» թիվ 52 որոշում
13. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիր
14. 2022 թվականի սեպտեմբերի 14-ի «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք
15. 2002 թվականի հունիսի 3-ի «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք
16. ՀՀ քրեական օրենսգիրք
17. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
18. ՀՀ Սահմանադրություն
19. ՄԱԿ անվտանգության խորհրդի 1540 բանաձև (2004)
20. ԵՄ-ի թիվ 2021/821 կարգավորում
21. Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին Կոնվենցիա
22. Միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիր
23. Խաչատրյան Մ. Մաքսային գործ/ Մ. Խաչատրյան.- Եր.:Տնտեսագետ, 2019, էջ 119-120
24. Шерешов А.В., Федотова А.Ю. Тенденции экспортного контроля в РФ // Международный журнал гуманитарных и естественных наук. – 2021. – №5-2. 2. Макарова А.В. Осуществление экспортного контроля в России // Экономика и бизнес: теория и практика. – 2020. – №5-2.
25. Борисова Е.М., Михайлова И.Л. Актуальные проблемы и направления развития экспортного контроля в России // БИТ. – 2021. – №2 (18)
26. Щербakov М.Г. Гражданско-правовой аспект режима товаров



- двойного назначения // Актуальные проблемы российского права. 2019. №3 (100)
27. Щербаков М.Г Проблемы режима товаров и технологий двойного назначения // Вестник Казанского юридического института МВД России. 2018. №2 (32)
  28. Гокинаева И. А., Основы таможенного дела, часть 2, Тамо-женные операции, учебное пособие, Санкт-Петербург, 2016
  29. Драганова В. Г., Основы таможенного дела, учебник, Моск-ва, "Экономика", 2012, 380 с.
  30. Seyoum, Belay. Export Controls and International Business: A Study with Special Emphasis on Dual-Use Export Controls and Their Impact on Firms in the US / JOURNAL OF ECONOMIC ISSUES. Vol. LI No. 1. March 2017
  31. Jones, S.A. Non-Proliferation Export Controls: origins, challenges, and proposals for strengthening / edited by Daniel Joyner. - Ashgate Publishing Limited. 2006
  32. Lockheed Martin Uses Best Practices to Build World-Class Export Compliance System // Ioma's Managing Exports. Institute of Management & Administration, Inc. -2002. – November
  33. Marcuss St., Richard E. Extraterritorial jurisdiction in United States trade laws: The need for a consistent theory / Columbia journal of Transnational Law. - 1981.- Vol. 20.
  34. Weinberger, S. (2009). Export-control laws worry academics. *Nature*, 461, 156-156.
  35. Achilleas, P. (2017). Introduction Export Control. , 3-16.
  36. Michel, Quentin. *Sensitive Trade: The Perspective of European States on Export Control for Conventional Arms and Dual-Use Goods*. 2011



37. Jackson, I. (2001). *Troubled Partners: Anglo-American Relations and the Battle Act in 1952.* , 90-110.
38. Davis, L. (1996). *The Wassenaar Arrangement, Strategic Comments*, 2:7, 1-2
39. Jaffer, J. (2002). *Strengthening the Wassenaar Export Control Regime.* *Chicago Journal of International Law*, 3, 22.
40. *Export Administration Regulations (EAR) by the Bureau of Industry and Security (BIS)*
41. *Defense Technology Security Administration (DTSA) Guidelines*
42. *BAFA Manual for Export Control and Academia*



## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ



## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ



## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԷՄԻԼՅԱ ԼԵՎՈՆԻ ՏԻՏԱՆՅԱՆ  
ՊԱՏՎԱԿԱՆ ՍՏԵՓԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ  
ՄԱՐԻԱ ԶՈՋԵՖԻ ԷՍՊՈՆԱ

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ  
ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ  
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀՀ-ՈՒՄ



Չափսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:  
Ծավալ՝ 11 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 50:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:  
ք.Երևան, Դ.Մալյան 45:  
հեռ.՝ 094-58-22-99, E-mail: [info@limush.am](mailto:info@limush.am)